

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՍ

ديجيتالو

Հրատարակումն Գահիրեի ՀԲԸՄ-ի

للمدرسة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԱՅԱՋԳԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

**ԽՍՐԱԳԻՐ**  
Մարուշ Երամեան

**ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**  
Մարտիկ Պալաեան

**ՍՐԱԳՐԻՉ  
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**  
Անայիս Ճիզմեճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ  
ՁԵԽՈՐՐՈՄ**  
Շահե Լուսարարեան

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**  
Nubar Digital

**Գահիրեի ՀԲԸՄ-ի  
լուրերուն հետեւեցէք  
www.agbuegypt.com  
կայքէջով:**

**Ծանօթացէք «Հայաստան  
եւ Հայերը Արաբական  
Սամուլին մէջ. 1876-1923»  
հաւաքածոյի նիւթերուն  
www.arminmedia.com  
կայքէջով:**

**«Տեղեկատու»ի յօդուածա-  
գիրներուն արտայայտած  
կարծիքները անպայման-  
օրէն չեն ներկայացներ  
Գահիրեի ՀԲԸՄի պաշտօ-  
նական տեսակետները:**

**ԹԻԻ 107 ՆՈՐ ՇՐՋԱՆ,  
ԱՊՐԻԼ 2023**

Խմբագրական մտորումներ	1
Ժողով Գահիրեի մասնաճիւղին	2
ՀԲԸՄ Լիբանանի ընդհանուր ժողովը	4
Աստուածաբանական երկխօսութեան 19-րդ ժողովը	5
Իսամ Նակիի հետ	6
Լաւատեսութիւնը կը փրկէ աշխարհը <b>Անժիկ Յակոբեան-Կանիմեան</b>	15
Եգիպտոսէն նուէր աշխարհին	17
Միջինք եւ Զատկուան պազար <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	19
Հայերը անցեալին եւ այսօր	20
Կանանց Միջազգային Օր	21
Զոյգ Հատորներու Շնորհանդէս <b>Դոկտ. Ա. Տազետեան</b>	22
Դուրսը եւ Ներսը <b>Մ. Ե.</b>	25
Հայագգի մարզիկները ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մէջ <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	26
Յոյս կա՞յ արդեօք <b>Սօսի Ներեպեան-Յակոբեան</b>	27
Մեր կորուստները՝ Էտմոն Ազատեան	30
Չէննայի Ս. Աստուածածին Եկեղեցին	31
Այվազովսկին Ուքրանացի՞ <b>Վարդան Մադթէոսեան</b>	32
Գանատահայը Օփերայի բեմին վրայ	33
Սէուտուիին Զարդերուն մասին	34
Կարճ Լուրեր	
Հայոց Ցեղասպանութեան Հրապարակ	35
Բանաստեղծութեան Միջազգային Օր	35
Համերգ Վերսայի պալատին մէջ	35
Երկրորդ Միջընկնը	36
Մայէսթրօ Մ. Պաղպուտարեան կը պարգեատարուի	36
Շնորհակալութիւն	



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Այս տարի անգամ մը եւս, ինչպէս յաճախ պատահած է, մեր ազգին համար ամենէն կարեւոր երկու դէպքեր, որոնցմէ մէկը դարերու կեանք ունի, իսկ միւսը՝ աւելի քան հարիւր տարուան կեանք, կը հանդիպին Ապրիլ ամսուան մէջ, որուն անունը եւս խորհրդանշական կը թուի մեզի՝ ապրիլ։ Սուրբ Յարութեան տօնն ու Ապրիլ 24-ը, թէեւ հակառակ հերթականութեամբ – հերթականութիւնը այնքան ալ էական չէ – կը զուգահիշին Ապրիլի մէջ, անգամ մը եւս մեր ազգին վերապրումի ուժեղ ծիներուն գոյութիւնը հաստատելով մեր ցեղին արեան մէջ։

1900-ականները նախորդող եւ յաջորդող տարիներուն «ցեղ» բառը յաճախ օգտագործուած է, մանաւանդ Եգիպտոսի մէջ, կարծես օտարներու զօրեղ ազդեցութեամբ. մեր կարեւոր անունները, ինչպէս Պօղոս Եռուսէֆ Պէյ, Նուպար Փաշա կամ Եագուպ Արթին փաշա, իրենց մայրենիէն աւելի ունէին իմացութիւնը օտար լեզուներու, մանաւանդ ֆրանսերէնին։

Օտար լեզուի մայրենիին նման իմացումը, որ այսօր եւս մեր գլխաւոր հարցերէն մէկն է, կարծէք առհաւական այլ հարցերու պէս, մեր ազգային ծիներուն հետ արիւնով փոխանցուած է մեզի։

1912 թուականին լոյս տեսած Սմբատ Բիրատի «Որդեսպան Ծնողքը» վէպին մէջ, ուր հայ «վարժապետ» մը կը ճգնի հայկական դպրոց մը բանալ, յստակօրէն կ'ըսուի իրեն.

«... քանի՛ քանի տարբեր վայրերէ, կեդրոններէ գաղթած ու հոս հաստատուած ընտանիքներ կան, մեր ազգային վարժարանը կա՛յ (կ'ակնարկէ Գալուստեան Ազգային Վարժարանին), ուր ձրի կ'աւանդուին ուսումները, լոկ աղքատիկ տղաքներ կը յաճախեն հոն, ունեւորներուն զաւակերը գունդագունդ կը վազեն Գրանֆիչները, Սէն Մէրի՛զ Սգուլը, Ամերիկեան միսիոնարական, Յիսուսեաններուն վարժարանները, իտալական, անգլիական, ֆրանսական, գերմանա-

կան, ամէն ազգերու մրցավայրը կը համարուի Եգիպտոսը, սիրելի՛ պարոն» («Որդեսպան Ծնողքը», «Ժամանակակից մատենաշար» թիւ 25, Կ. Պոլիս, 1912, էջ 111)։

Այսօր գրեթէ անփոփոխ կերպով նոյնն է կացութիւնը Սփիւռքի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ, ուր հայկական վարժարան յաճախող հայ աշակերտներուն թիւը կը հաւասարի օտար վարժարաններ յաճախող աշակերտներու թիւին. ասոր պատճառը թերեւս հոգեբանական այն կեցուածքն է, որ այսօր յստակ է սփիւռքահայ արեւմուտքին մէջ, եւ որուն չէինք անդրադարձած դար մը առաջ՝ թէ «հայութիւնը հոգեկան դրուածք է եւ բնաւ պայմանաւոր չէ լեզուով՝ հայերէնով»։

\* \* \*

Այս շրջանին ականատես եղանք գեղեցիկ երեւոյթի մը՝ գաղութիս անդամներէն Սարգիս եւ Ծովիկ Եանըգեանները իրենց ընտանեկան հաւաքածոյին բոլոր հայերէն գիրքերն ու այլ գիրքեր, նուիրեցին ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղին Երուսաղէմ Գ. Աղաթօն գրադարանին, հաստատելով որ ՀԲԸՄիութեան Եգիպտոսի 2011-ին «ՀԲԸՄի Մատենադարան» անունով հաստատուած եւ նոր վերակազմուած գրադարանը արդէն վստահութիւն կը ներշնչէ եւ դարձած է մանաւանդ հնաստիպ գիրքերու կայուն տուն մը։

Անցնող եռամսեակը դարձեալ հարուստ էր ընկերային ձեռնարկներով, որոնց մէջ մեծ դեր ունէին գաղութիս փոքրիկները, ինչպէս Վարդանանց տօնակատարութիւն, մայրերու օր, ուսուցիչներու օր, Միջինք, Ծաղկազարդ, Սուրբ Յարութեան տօն եւ այլն։ Մէկ քանի մշակութային ձեռնարկներ եւս տեղի ունեցան, որոնց անդրադարձած ենք մեր էջերով։

Արցախի հարցը եւ մանաւանդ շրջափակումը տակաւին լուծում մը չեն ստացած, շարունակելով մնալ մեր տագնապ-



ներուն կիզակէտը:

Նոյնքան տագնապալի է մեր երկրին դրացի Սուտանին մէջ բռնկած պատերազմը, որ իր նմանութեամբը «արաբական գարուն»ին, խորապէս կը մտահոգէ մեզ:

Ամառը մեր դռներուն է, կարծէք անգամ մը եւս հաստատելով, թէ որքան ալ

մարդիկ տագնապին, որքան ալ պատերազմներ բռնկին, բնութիւնը անսասան կերպով կ'ապրի իր հոլովոյթը, յաճախ մեզ եւս ներշնչելով, որ հակառակ բոլոր խոչընդոտներուն, կեանքը կը շարունակուի:

Բարի, խաղաղ եւ հաճելի ամառ:

## ԺՈՂՈՎ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ



ՀԲԸՄիութեան Գահիրէի մասնաճիւղին ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Հելիոպոլսոյ Ս. Չագըր Մշակութային սրահէն ներս, 15 Փետրուար 2023-ին: Անդամները հաւաքուած էին ընտրելու համար Գահիրէի մասնաճիւղին նոր կազմը:

Խօսք առին տիար Մարտիկ Պալաեան եւ Դոկտ. Ճորճ Սիմոնեան, որոնց խօսքի աւարտին ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին յիշատակը ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի հանգուցեալ ատենապետ տոքթ. Վիգէն Ճիզմէճեանին եւ Շրջանակային Յանձնաժողովի հանգուցեալ ատենապետ Օննիկ Պըլըքտանեանին:

Ժողովէն եւ ընտրութենէն ետք ներկաները հիւրասիրուեցան քոքթէյլով:

ՀԲԸՄիութեան Գահիրէի մասնաճիւղին նոր կազմը կը պարզէ հետեւեալ պատկերը.



## ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ

### Նորընտիր Վարչությունը

Դոկտ. Ճորճ Սիմոնեան	Ատենապետ
Տիար Մարտիկ Պալանեան	Փոխ ատենապետ
Տիար Գեորգ Աւանեան	Գանձապահ
Տիար Ռուբէն Թերզիպաշեան	Ատենադպիր
Տիար Յակոբ Գարակէօզեան	Անդամ
Տիար Քրիս Միքայէլեան	“
Տիկ. Արփի Խաչերեան	“
Տիկ. Րուպինա Ասլանեան	“
Տիար Սարո Պըլըքտանեան	“
Պատուոյ Ատենապետ՝ տիար Պերճ Թերզեան	

### *Օժանդակ անդամներ.*

- Տիար Վաչէ Արթինեան
- Դոկտ. Արթո Պըլըքտանեան
- Տիկ Ասփէ Ճիզմէնեան
- Տիկ. Անի Պօղոսեան
- Տիկ. Նաթալի Ասլանեան
- Տիար Ալէն Թերզեան
- Տիար Վարդան Թերզիպաշեան
- Տիկ. Մարինա Սիմոնեան
- Պատուոյ Անդամ՝ տիար Օննիկ Կարիպեան

Շնորհաւորութիւններ եւ աշխատանքային յաջողութեան մաղթանքներ նորընտիր անդամներուն:

ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ  
ՏԱՐԲԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ





## ՀԲԸՄ ԼԻՔԱՆԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Պէյրուֆի Տեմիրճեան կեդրոնէն ներս, Կիրակի, 5 Մարտ 2023-ին տեղի ունեցաւ Լիբանանի շրջանի Ընդհանուր Ժողովը, որուն մասնակցեցան Գահիրէէն տիկիններ Բուպինա Ասլանեան-Նորարեւեան, Ասփէ Ճիզմէճեան-Կապէեան եւ դոկտ. Արթո Պըլըքտանեան:

Կլոր սեղաններու շուրջ մասնակիցները տեղ գրաւեցին ըստ նախապէս որոշուած նստատեղերուն: Իւրաքանչիւր սեղանի վրայ կային անդամներ Շրջանակային, Տեղական, Երիտասարդ Մասնագէտներու յանձնաժողովներէն եւ սկաւտական խորհուրդէն, իրարու ծանօթանալու եւ մտերմիկ մթնոլորտ մը ստեղծելու նախանձախնդրութեամբ:

Համագումարը բացուեցաւ ՀԲԸՄիութեան քայլերգով, որմէ ետք խօսք առաւ օր. Արին Ղազարեան, ներկայացնելով Շրջանակային Յանձնաժողովի անդամները, շնորհակալութիւն յայտնելով ներկաներուն եւ այլ քաղաքներէ եկած հիւրերուն, իրենց ներկայութեան համար:

Ապա ցուցադրուեցաւ կարճ ժապաւէն մը, որ կը ներկայացնէր ՀԲԸՄիութեան մարդասիրական եւ սիրայօժար կերպով կատարած աշխատանքները տագնապներու ընթացքին, մանաւանդ այն խումբ մը երկրաչափերն ու ճարտարապետները, որոնք տուններու նորոգութեամբ կը զբաղէին եւ այլ աշխատողներ, որոնք ճաշեր կը պատրաստէին կարիքաւորներուն համար:

ՀԲԸՄի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին ատենապետը նուէրներ բաժնեց այն անդամներուն, որոնք կարելի էր աշխատանք տարած էին Լիբանանի տագնապալի օրերուն ընթացքին:

Ապա քննարկուեցաւ մը տեղի ունեցաւ «Հայկական Ինքնութիւն եւ Արդիականութիւն» խորագրով, որուն մասնակցեցան ՀԲԸՄիութեան Լիբանանի երեք անդամներ, իսկ Վազգէն Եագուպեան՝ Հայաստանի ՀԲԸՄիութեան նախագահը մասնակցեցաւ **գումով**, երեւանէն:

Քննարկուող թեժ հարցերն էին.



Ա. Ինչպէ՞ս պահել հայկական ինքնութիւնը երիտասարդ սերունդին մօտ:

Բ. Ինչպէ՞ս օգտագործել եւ յաւելել ու զօրացնել շարքերը, ապագային մասին մտածելէ առաջ:

Գ. Ինչպէ՞ս ներգրաւել միութեան անդամները, ապագան կերտելու անմիջական աշխատանքին մէջ:

Դ. Ինչպէ՞ս ստեղծել կարիքը պատկանելու ՀԲԸՄիութեան շարքերուն եւ ինչ ընել, որ երիտասարդ անդամները աւելի գործօն դեր վերցնեն Միութենէն ներս:

Ե. Կարգ մը մասնակիցներ նշեցին, թէ սկաւտական շարժումը մեծ դեր ունի պատկանելիութեան զգացումը արթնցնելու եւ զօրաւոր պահելու պատանիներուն մօտ: Սկաւտները կը մեծնան խորապէս համոզուած, որ պէ՛տք է ներդրում ունենան իրենց շրջապատէն ներս:

Իւրաքանչիւր շրջանէ անդամ մը զեկուցեց մէկ տարուան աշխատանքներուն մասին մարդասիրական, մարզական եւ կրթական մարզերէն ներս:

Ժողովը վերջ գտաւ հիւրասիրութեամբ:





## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ԺՈՂՈՎՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Արեւելեան Ուղղափառ եւ Կաթողիկէ Եկեղեցիներուն միջեւ աստուածաբանական երկխօսութեան 19-րդ ժողովը տեղի ունեցաւ 31 Յունուարէն մինչեւ 4 Փետրուար, Գահիրէի Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Սուրբ Պիշոյ վանքի (Ուատի Նաթրուն) «Լոկոս» կեդրոնէն ներս:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Արեւելեան Ուղղափառ եւ Կաթողիկէ Եկեղեցիներու տարբեր երկիրներէ ժամանած աստուածաբաններ: Այս երկխօսութեան հաստատման առաջին իսկ օրէն իր շարունակական մասնակցութիւնը բերած է Ամենայն Հայոց Վեհափառին կողմէ նշանակուած Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան:

Միջ-դաւանական այս ժողովին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու կողմէ կը մասնակցէին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան (Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեան), Ղպտի, Անտիոքի Ասորի, Հնդիկ Մալապար, ինչպէս նաեւ Եթովպիոյ եւ Էրիթրեայի Եկեղեցիներու ներկայացուցիչները:

Ժողովին, Հայ Առաքելական եւ Կաթողիկէ Եկեղեցիներու պատուիրակութեան մաս կը կազմէին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնէն Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանը, իսկ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ներկայացուցիչներէն Թրքահայոց Թեմի Առաջնորդ՝ Արպ. Տ. Լեւոն Արք. Զեքիեանը, Հայ Կաթողիկէ Բերիոյ Թեմի Առաջնորդ Արպ. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանը:

Արեւելեան Ուղղափառ եւ Կաթողիկէ Եկեղեցիներուն միջեւ երկխօսութիւնը



*Նկարին մէջ, ձախէն՝ Մակար Եպս. Աշգարեան, Խաժակ Արք. Պարսամեան, Պապա Թաուաթրոս եւ Աշոտ Եպս. Մնացականեան*

խթանելու նպատակով կայացած ժողովի տարբեր նիստերուն հիմնական թեման էր Սուրբ Կոյս Մարիամի ուսուցումը Կաթողիկէ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու ականդութեան մէջ: Նիստերու ընթացքին ներկայացուցեցան տարբեր ուսումնասիրութիւններ, որոնց շուրջ տեղի ունեցան քննարկումներ: Նիստերէն մէկուն Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան ներկայացուց «Սուրբ Կոյս Մարիամը Հայ Եկեղեցւոյ ուսմունքին եւ կեանքին մէջ» նիւթը, պատրաստուած Հոգշ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Անանեանի կողմէ, որ յարգելի պատճառներով չէր կրցած ներկայ գտնուիլ ժողովին:

Ժողովի աւարտին մասնակիցներուն ընդունեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Թաուատրոս II Պատրիարքը, որ իր գնահատանքը եւ օրհնութիւնը փոխանցեց բոլորին: Հանդիպման ներկայ եղաւ նաեւ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Աշոտ Եպս. Մնացականեանը:



## «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԷՆ ՕՐ ՀՈԳԻՒՍ ՄԷՋ ԿԸ ՄԵԾՆԱՅ» ԲԵՄԱԴՐԻՉ ԻՍԱՄ ՆԷԿԻ ԸՆԾԵՑ

**Տեղեկատու - Կը խնդրեմ որ դուք ձեզ ներկայացնեք մեր ընթերցողներին:**

**Իսամ Նեկի** - Լուսանկարիչ, բեմադրիչ, գրող, ծնած եմ Գահիրէ, 1979-ին, տնտեսագիտութիւն ուսանած եմ, բայց յարաբերութիւնս արուեստին հետ շատ կանուխ սկսեր եմ, նախ թատրոնի մէջ որպէս դերասան, բեմադրիչի օգնական եւ բեմադրիչ, ապա՝ ռատիոյի մէջ ...

**Տ. Ըսիք որ կը գրէք, ընդհանրապէս ի՞նչ են ձեր գրութիւնները.**

**Ի. Ն.** Նիւթերս կապ ունին դէպքերու հետ, օրինակ Ափրիկէի մէջ պատահած դէպքեր, կամ Պրագիլի մէջ՝ ցեղային աշահութիւններ, ըստ մարդոց գոյնին...

**Տ. Մէկ խօսքով՝ մարդկային նիւթերու կ'անդրադառնաք:**

**Ի.Ն.** Այո՛, միշտ.

**Տ. Իսկ ազգային թեմանե՛ր:**

**Ի. Ն.** Ի՞նչ ըսել կ'ուզէք.

**Տ. Թեմաներ որոնք կը կապուին արաբական աշխարհին.**

**Ի. Ն.** Ոչ. հետաքրքրութիւններս այս տարածաշրջանէն անդին են. ճիշդ է որ ծնունդով Միջին Արեւելքին կը պատկանիմ, սակայն քաղաքականօրէն բնաւ հետաքրքրուած չեմ այս տարածաշրջանով: Կը նախընտրեմ մէջս պահել այն, որ պատմութեան գիրքերէն սորված ենք եւ կ'օգնէ մեզի, որ շարունակենք սիրել այս երկիրը:

**Տ. Բայց գիրքերուն մէջ գրուածը ընդհանրապէս իրականութիւնը չէ, այլ իտէալական տարբերակ մը իրականութեան:**

**Ի. Ն.** Այո, ճիշդ է, սակայն կը նախընտրեմ այն երեւոյթները, որոնք այս երկիրը տարբեր եւ ինքնուրոյն կը դարձնեն այլ երկիրներէ, ինչպէս օրինակ Փարաւոնեան մշակոյթը, որուն նման աշխարհի ո՛չ մէկ երկրի մէջ կարելի է գտնել, կամ Արամէական մշակոյթը ... Կը նախընտրեմ



անցեալը, անշուշտ ատիկա չի նշանակեր թէ չեմ մտածեր ներկային մասին, բայց կը նախընտրեմ տարածաշրջանին հետ իմ յարաբերութիւնս պահել այն մանրամասնութիւններով, որոնք կը հաստատեն այդ երկրին ինքնուրոյնութիւնը, քան համաշխարհայնացումը, որուն մէջ ենք բոլորս այսօր:

**Տ. Կը կարծե՛ք որ ինքնուրոյն էք ձեր աշխատանքով, եւ ի՞նչ է այդ ինքնուրոյնութիւնը:**

**Ի. Ն.** Կը կարծեմ թէ մեզմէ իւրաքանչիւրը զաւակն է իր ապրած փորձառութեան. աշխատանքիս բերումով բազմաթիւ ճամբորդութիւնները զոր ըրած եմ եւ կ'ընեմ, կը ստիպեն որ այլ նայուածքով դիտեմ մարդը. եթէ մնամ այն քաղաքին/երկրին մէջ, ուր ծնած եւ մեծցած եմ եւ որուն լեզուն շատ լաւ գիտեմ, կենսափորձս սահմանափակ կը մնայ այդ երկրով, բայց երբ կը ճամբորդեմ, կը ծանօթանամ այլ երկիրներու, ազգերու եւ մարդոց, նայուածքս կը փոխուի, հասկացողութիւնս այլին հանդէպ կը խորանայ ... Հոսկէ կու գայ իւրաքանչիւր անձի ինքնուրոյնութիւնը: Անշուշտ իմ կենսափորձս կը շարունակուի տակաւին, հետեւաբար վերջնական խօսք չեմ կրնար ըսել, բայց ուշադրութիւնս միշտ կ'երթայ պատմու-





թեան ետին կեցող մարդուն, ո՛չ թէ դէպքին. յաճախ կ'իմանանք մեծ իրադարձութեան մը մասին, զիս հետաքրքրողը այդ իրադարձութեան հեղինակն է, ո՞վ է ան որպէս մարդ ... Այս է ուղղութիւնս երբ վաւերագրական ֆիլմ կը նկարեն. դէպքի մը ետին կեցող մարդուն պատմութիւնը. ասիկա կորիզն է իմ աշխատանքիս: Այս մօտեցումն է, որ մեզ, որպէս մարդ, կը մօտեցնէ իրարու:

**Տ. Ո՞րն է ձեր ամենէն մեծ գործը որ ըրած էք մինչեւ օրս:**

**Ի. Ն.** Այդ ամենէն մեծը տակաւին չեմ ըրած, բայց լաւագոյնս մինչեւ այսօր ինծի համար՝ «Մոռացուած Հայրենիք» ֆիլմն է: Թող մարդիկ գնահատեն գրողի մը առաջին գործը եւ այն, որ տակաւին չէ գրուած, ինչպէս կ'ըսուի յաճախ, որովհետեւ բան մը որ առաջին անգամ կը կատարուի, մեր ամբողջ ուշադրութիւնը կը գրաւէ: Իմ իւրաքանչիւր նոր աշխատանքիս այդ մտածելակերպով կը մօտենամ. ինչպէս նաեւ թոյլ կու տամ – անշուշտ ամբողջ նախապատրաստական աշխատանքները կատարելէ ետք – որ վայրը ինք, ուր կ'աշխատիմ, առաջնորդէ աշխատանքիս կերպը, որովհետեւ վայրը՝ լոյսը, շրջապատը, նոյնիսկ հոտերը մեծ ազդեցութիւն ունին վաւերագրական ֆիլմերու պարագային եւ կ'ամբողջացնեն պրպտողական աշխատանքը, որ կատարած կ'ըլլամ: Կրնան շատ հաճելի, երբեմն նաեւ ոչ հաճելի անակնկալներ պատահիլ նկարահանումի ընթացքին. բեմադրիչը պէ՛տք է կարող ըլլայ անոնց հետ աշխատելու: Այդ է պատճառը, որ գալիք գործս իսկ չեմ կրնար ըսել որ լաւագոյնը պիտի ըլլայ ... Իւրաքանչիւր նոր գործ, իւրաքանչիւր նոր քերթուած որ կը գրեմ, ինքզինքս կը բացայայտեմ:

**Տ. Քերթուած ալ կը գրէք:**

**Ի. Ն.** Այո ... Կը կարծեմ թէ երբե՛ք պիտի չհասնիմ անձիս լաւագոյն տարբերակին. պարզապէս պէտք է շարունակեմ պրպտումներուս ընթացքը:

**Տ. Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու տակ ծանօթացաք հայերուն եւ եգիպտահայ գաղութին:**

**Ի. Ն.** Այս հարցումը յաճախ կը հար-



ցուի ինծի, մի՛շտ նոյն պատմութիւնը կը պատմեմ, իր բոլոր մանրամասնութիւններով: Շատ վաղուց շրջանաւարտ եղայ տնտեսագիտութեան կաճառէն, որ Ապպասիէ հրապարակին մօտ կը գտնուի եւ որուն մօտաւորիոյ կեդրոն մը կար, ուր կը յաճախէի ֆիլմաշարերու համար գրած դրուագներս տանելու: Ճամբուս վրայ լուսանկարչական գործիքներու շատ փոքր խանութ մը կար (մինչեւ այսօր տակաւին ունիմ հօրս լուսանկարչական Զէնիթ գործիքը): Երբ առաջին վճարումը ստացայ ռատիոյէն, որոշեցի այդ խանութը երթալ, ուր ծեր, ճերմակահեր մարդ մը միշտ գիրք կը կարդար: Գացի եւ macro extension bellows գնեցի, խոշորացոյցի նման կտոր մը, որ նկարչական գործիքին վրայ կ'անցուի: Խանութը եղած միջոցիս հեռաձայն մը եկաւ իրեն եւ մարդը սկսաւ խօսիլ լեզուով մը, որ ամբողջովին անծանօթ էր ինծի. բնաւ չէի հասկնար: 18-19 տարեկան էի: Ինք անշուշտ արաբերէն շատ լաւ կը խօսէր, պարզապէս հնչումի աննշան տարբերութիւն մը ունէր, կը զգացուէր որ «խառնակա» է: Հարցուցի: «Հայ եմ» ըսաւ: Ոչինչ գիտէի հայերուն մասին. ոչինչ՝ Հայաստանի մասին. լսած իսկ չէի: Ասիկա ինծի համար մեծ հարց դարձաւ՝ կ'ապրիմ քաղաքի մը մէջ, ուր փոքրամասնութիւններ կան, որոնց մասին սակայն ես ո՛չ մէկ գաղափար ունիմ, մարդիկ, որոնք հիմնադիրները եղած են ժամանակակից Եգիպտոսի ... Ասիկա մեծ հարց մըն է կը կարծեմ: Հիմա գիտեմ որ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հայերը ընկերութեան կարելոր մասը կը կազմեն եւ



բոլորը գիտեն անոնց մասին, նոյնիսկ եթէ մանրամասնօրէն չեն գիտեր, բայց անոնց գոյութեան ծանօթ են: Իմ անգիտութիւնս մեծ ցնցում եղաւ ինծի համար:

Բարեկամիս – որովհետեւ արդէն բարեկամացեր էինք – Լեւոն Տէր Յակոբեանին խանութքը յաճախ կ'այցելէի, կը հարցնէի եւ ինք կը պատմէր հայերուն մասին ... Զգացա՞ծ ես ապրումը, երբ կը գտնես բան մը, զոր երկա՛ր փնտռեր էիր ... Երբ կը խօսէր հայերուն եւ Հայաստանի մասին, կը զգայի թէ որոշ մտերմութիւն մը կայ մեր միջեւ, իմ եւ «հայ» որակուած անձին միջեւ, անկախ անոր ինքնութենէն... Սկսայ կարդալ հայերուն մասին, հայկական երաժշտութիւն մտիկ ընել եւ խորանալ... Հայաստանը սկսաւ հոգիիս մէջ մեծնալ ամէն օր:

Լեւոն Տէր Յակոբեանի մահէն քանի մը օր առաջ կրկին իրեն գացեր էի, մինչեւ տուն ընկերացայ իրեն եւ տեսայ թէ հանգիստ չէ. «Ի՞նչ ունիս» ըսի, ըսաւ.

«Ոչինչ, պարզապէս կը զգամ թէ չկրցայ ընել այն ամէնը, որ կ'ուզէի երկ-

րիս համար ընել»:

«Այնքան բան ըրած ես», – ըսի եւ սկսայ թուել ըրածները, որովհետեւ կը խորհէի թէ Եգիպտոսի մասին կը խօսի:

«Հայաստանի՛ մասին կ'ըսեմ», – ըսաւ:

Այդ պահը ճամբաբաժան մը եղաւ կարծես կեանքիս մէջ: Քանի մը օր ետք իմացայ, որ բարեկամս մահացեր է: Իր խօսքը կտակի պէս բան մը դարձաւ ինծի համար, թէեւ իր նպատակը կտակ ընել չէր անշուշտ:

Այս բոլորը 2000 թուականին սկիզբն էր: Երկար տարիներ ետք, ամուսնացեր էի եւ կեանքը փոխուեր էր, երբ ասպարէզս փոխեցի եւ հեռատեսիլէն անցայ վաւերագրական ֆիլմերու նկարահանումին: Պատուէր ստացայ կարգ մը երկիրներու հալածուած փոքրամասնութիւններուն մասին ֆիլմաշար նկարելու, բազմազգ ընկերութենէ մը: Ինծի տրուած էր ցանկ մը այն երկիրներուն, ուր պէտք էր նկարէի: Հայաստան չկար այդ ցանկին վրայ: Առաջին ֆիլմը նկարեցինք Փետրուար 2017-ին, Հարաւային Ափրիկէի մէջ: Երկրորդ երկիրը առաջարկեցի որ Հայաստանը ըլլայ, «Բայց ցանկին վրայ չէ» առարկեցին պատասխանատուները: Համոզեցի զիրենք եւ 2017-ի Ապրիլ 21-ին Հայաստան գացինք:

Լեւոն Տէր Յակոբեանին գրեթէ 17 տարի կ'ըներ որ ծանօթ էի: Ինծի թուեցաւ թէ իր կտակն է որ կ'իրագործեմ:

Երբ Զուարթնոցի մէջ ոտք դրի առաջին անգամ, զգացի թէ այդ է վայրը, որուն կը պատկանիմ ես: Տարիներ ամբողջ պատկերացուցած մէկ համայնապատկերս կը տեսնէի, ոչ իբրեւ երեւակայութիւն, այլ՝ իրականութիւն:

Եղա՞ծ է մէկը, որ քսան տարի անընդհատ պրպտումներ եւ ուսումնասիրութիւն ըրած ըլլայ իր Չտեսած մէկ երկրին մասին, հեռուէն. իսկ հետաքրքրութիւնը ոչ միայն չպակսի ուսումնասիրութեամբ, այլ ւաւելնայ ժամանակին հետ: Հայաստանի մէջ նկարահանումը երկու հանգրուանով ամբողջացաւ՝ Ապրիլ 2017-ին եւ նոյն տարուան Սեպտեմբերի վերջերը:

Անշուշտ ամբողջ վաւերագրութիւնը ես գրեր էի, որուն վերջաւորութեան ըսի.




«Հեռացայ Հայաստանէն, բայց Հայաստան չհեռացաւ ինձմէ»:

Սպասելի էր, որ իմ արկածախնդրութիւնս Հայաստանի հետ, յաջորդ երկրին նուիրուած ֆիլմին սկիզբնաւորութեան հետ վերջ գտնէր: Այդպէս չեղաւ սակայն: Ամէն աշխատանքի աւարտին կրկին կը մտածէի Հայաստանի մասին, որ չէր ուզեր ինձմէ ձերբազատուիլ: Ինծի կը թուի, թէ Հայաստան լսեց իմ խօսքս՝ «...Հայաստան չհեռացաւ ինձմէ»: Այդ օրուրնէ՛ 2017-էն մինչեւ այսօր վեց անգամ Հայաստան գացեր եմ: Այն ատեն էր, որ վստահ եղայ, թէ ինչ որ կ'երազէի, իրականութիւն է, կա՛յ: Թաքուն, ծածուկ կապ մը կայ իմ եւ այս երկրին մէջ ... այլ բացատրութիւն չեմ գտներ ամէն օր Հայաստանի հետ ապրող իմ այս վիճակիս:

**S. Հոգեփոխութի՛ն (reincarnation),- կ'ըսեմ խնդալով:**

**Ի. Ն.** Կրնայ ըլլալ ... չեմ գիտեր ... Գիտեմ որ այս փորձառութիւնը իմ կեանքս փոխեց: Համոզուած եմ, որ Հայաստանը ա՛յն երիրն է, ուր պէտք է երկար ապրիմ: Այս շրջանին էր, որ սկսայ աւելի ծանօթանալ եգիպտահայերուն, որովհետեւ երկար տարիներ Լեւոնէն զատ ուրիշ հայ չէի ճանչնար հոս, բայց Սուրիոյ, Լիբանանի եւ Հայաստանի մէջ շատ հայ ընկերներ եւ բարեկամներ ունիմ: Բարեկամի մը՝ Էտուար Մէլիքեանի կը պատմէի հայութեան եւ Հայաստանի հետ իմ կապս. Լաւ կը յիշեմ՝ Սեւանի ափին էինք. Էտուարտ ըսաւ՝ «Երբ վերադառնանք, քեզ պիտի ծանօթացնեմ տոքթ. Արմէն Մազլումեանին»: Ծանօթացանք, բարեկամացանք:

Յետոյ 2020-ը պատահեցաւ՝ պատերազմ, աղէտ: Սկսանք մտածել, թէ ինչ կրնանք ընել, ֆիլմ մը, որ միայն Արցախեան պատերազմին մասին չըլլայ, որովհետեւ ճիշդ է որ պատերազմը սկսաւ, բայց հոն չի վերջանար պատմութիւնը: Հոսկէ էր գաղափարը «Մոռացուած Հայրենիք»ին, որուն մէջ մեծ է եւ շատ յստակ հայ կնոջ դերը: Նկարահանումները Գորիսի (Սիւնիք) մէջ էին: Բոլորս ալ գիտենք հարիւր տարի առաջ ըսուած Գարեգին Նժդեհի խօսքերը՝ «Եթէ Չըլլան



Արցախն ու Սիւնիքը, չըլլար Հայաստանը»: Արցախի մեծ մասը կորսնցուցինք, չենք կրնար Սիւնիքը եւս կորսնցնել: Չենք կրնար Սիւնիքի կորուստը արտօնել...

**S. Բայց ինչպէ՛ս, ինչպէ՛ս ...**

**Ի. Ն.** Հայաստանը միայն հայերուն չի պատկանիր, այդ շրջանին մէջ է որ մարդկային պատմութիւնը սկսած է եւ կ'երկարի մինչեւ այլ ազգեր եւ դաւանանքներ. Ջրհեղեղէն ետք մարդկութիւնը ա՛յստեղէն է որ վերսկսաւ, Նոյին հետ, որ Տապանէն Արարատեան դաշտ իջաւ: Պարսիկ հին մատենագիրներուն գործերուն մէջ կը գտնենք այս բոլորը: Հետեւաբար այստեղ է որ մարդկային մշակոյթը ծագեր է: Հայաստանն ու Արցախը միայն հայերուն հարցը չեն, այլ՝ ամբողջ աշխարհին. գիտակից մարդիկը գիտեն ասիկա, թէ կարելի չէ 1100 տարուան քաղաքական յաւակնութիւններու թոյլատրել որ իրականանան ... Աստուած ոչ ընէ եթէ Սիւնիքը իյնայ, մարդկութիւնը մեծ աղէտի առջեւ պիտի գտնէ ինքզինք:



Դժբախտաբար քիչ են անոնք, որոնք այս մասին կը խօսին, շատ ավելի քիչ են անոնք, որոնք գիտեն թե ինչ է եւ ո՛ր է Հայաստանը, կամ Սիւնիքը, եւ ինչ կարելուութիւնը ունի geo-politics-ի մէջ, ամբողջ տարածաշրջանին՝ Միջին Արեւելքէն մինչեւ եւրօ-ասիական երկիրներն ու ապա ամբողջ աշխարհի համար:

Ռուանտա էի – ուր 1994-ին ցեղասպանութիւն տեղի ունեցած է ավելի քան մէկ միլիոն զոհերով – եւ կը նկարահանէի Ցեղասպանութեան յուշակոթողը, որուն տակ քառորդ միլիոն մարդ թաղուած է. Ահաւոր զգացողութիւն է ... Աշխարհը նոր սկսաւ հասկնալ Ռուանտայի ցեղասպանութիւնը, մինչ Ողջակիզումի մասին ամբողջ աշխարհը գիտէ. իսկ 1915-ի, անկէ առաջուան եւ անկէ վերջուան ցեղասպանութեան մասին աշխարհը կ'անգիտանայ. ասիկա շատ վտանգաւոր բան է, որովհետեւ մոռացութեան կը տրուին կարելոր իրադարձութիւններ: Խոր կերպով ազդուած էի Ռուանտայի մէջ, բայց անցաւ, իսկ Հայաստան կը մերժէ «անցնիլ» մէջս, կը մերժէ եզրայանգումի հասնիլ. ընդհակառակը՝ երբ հեռու եմ այդ երկրէն, կը զգամ որ բան մը պակաս է ինձմէ:

Մօրենական մեծ հօրս – որ այնքան ալ

եգիպտացիի չէր նմաներ – երբ հարցուցեր էի, թէ ինք բնի՞կ եգիպտացի է, ըսած էր.

«Չե՞մ ըսած քեզի, իմ մեծ հօրս մեծ հայրը Անատոլուէն եկած է Եգիպտոս ...»

Պատկերացուր որ այս խօսքը ըսելէն շաբաթ մը ետք մեծ հայրս մահացաւ. չեմ հասկնար՝ իրենց խօսքը կ'ըսեն, կ'երթան եւ յետոյ ես կը մնամ այդ խօսքերուն ծանրութեան տակ ... Թերեւս, թերեւս կ'ըսեմ, իմ խորունկ արմատներուս մէջ տեղ մը հայկական ծիներ կան, ապա թէ ոչ, ինչո՞ւ այսքան պիտի կապուիմ երկրի մը, որուն ծանօթացայ 17 տարեկանիս, եւ որ այսօր կ'իշխէ իմ մտածումներուս եւ հոգիիս վրայ. եթէ գրասենեակս այցելես, պիտի տեսնես թէ պատերուն կախուած են Արարատի նկարը, այբուբենը ... այսօր ես հայերէն կը սորվիմ, ոչ միայն խօսիլ, այլ նաեւ գրել-կարդալ:

**Տ. Ինչո՞ւ չէք անդրադարձած հարիւր տարի առաջ, այսինքն 1800-ական թուականներուն այն հայերուն, որոնք կարելոր դեր խաղցած են Եգիպտոսի քաղաքական թէ տնտեսական կեանքին մէջ, ինչպէս Պօղոս Պէյ Եուսուֆեան, Նուպար փաշա, կամ Եագուպ Արթին Փաշա:**




**Ի. Ն.** Անոնց բոլորին մասին շատ աղբիւրներ կան, գիրքեր գրուած են ժամանակակից եգիպտոսի քաղաքական կեանքին մէջ անոնց ունեցած դերին մասին, թէեւ հայերը շատ աւելի վաղ շրջաններու գտնուած են եգիպտոսի մէջ:

Յաճախ ըսած են եւ չեն ձանձրանար կրկնելու՝ միշտ ալ փնտռած են վայր մը, ուր կը միանան **ինքնութեան տարրերը**, առանց ուժեղ կերպով իրենք զիրենք զգացնելու, միաժամանակ ներդաշնակօրէն ներհիւսուած. ասիկա զգացի Հայաստան առաջին երթալուս իսկ: Անմիջապէս ուշադրութիւնս գրաւեց այդ ներդաշնակութիւնը, թէեւ հայերը իրենք չեն զգար ասիկա՝ լեզուն, հաւատքը, մարդոց դէմքերը, երաժշտութիւնը, տառերը, լեզուին կշռոյթը, պարերուն ոճը, նոյնիսկ կլիման կամ մարդոց ուտելու կերպը ... Եւ ասիկա՝ դարերէ ի վեր: Շատ երկիրներ այցելած են, սակայն ո՛չ մէկ երկրի մէջ գտած են ինքնութեան տարրերու այս ամբողջականութիւնը, այս ներդաշնակութիւնը: Թերեւս այս է պատճառը, որ հոգեկան հանգստութիւն կը զգամ այնտեղ: Օրինակ մը բերելու համար առնենք արուեստի երկու տարբեր գործեր՝ երաժշտական գործ մը եւ գորգ մը. մտիկ կ'ընես երաժշտութիւնը, կը դիտես գորգը, եւ անմիջապէս կը զգաս, որ անոնք նոյն ակունքը ունին. Խաչատուրեանի մէկ գործը եւ Մեղրիէն եկած կարպետ մը ... Կինը, որ լաւաշ կը թխէ եւ փոքրիկները որոնք երաժշտութեան դպրոցէն դուրս կ'ելլեն, նոյն ծիները ունին: Տեսայ այս բոլորը, զգացի, անդրադարձայ անոր եւ ուզեցի մաս կազմել անոր: Ինքնութեան ոչ մէկ աններդաշնակութիւն տեսայ հոն:

**Տ. Մոռցար պատմութիւնը, մեր ծանր եւ դժուար պատմութիւնը դարերու ընթացքին, որ մինչեւ օրս կը շարունակուի տակաւին. թերեւս այդ ծանր եւ դժուար պատմութիւնն է պատճառը ինքնութեան ներդաշնակութեան Հայաստանի մէջ:**

**Ի. Ն.** Չեն գիտեր, թերեւս ... Հայկական ինքնութիւնը այնքան բարդ կառոյց ունի եւ այնքան բազմաշերտ է – ճիշդ **փախլաւայի** պէս – նոյնիսկ նախադասութիւն-



ներն ու բառերը. դժուարութիւն ունեցանք, երբ ֆիլմին մէջ անգլերէն եւ հայերէն թարգմանութիւնները կ'ուզէինք տակ-տակի դնել, հայերէնը շատ երկար կ'ըլլար: Ես անձնապէս դժուարութիւն ունեցայ **շնորհակալութիւն** բառը սորվելու եւ արտասանելու, յետոյ գիտցայ թէ կարելի է նաեւ **շնորհակալ** ըսել. երբ լեզուն լրիւ կը սորվիս եւ կը զգաս, ամբողջովին տրամաբանական կը գտնես այդ բարդութիւնը:

**Տ. Դուք որ դուրսէն կու գաք եւ դրսեցիի նայուածք ունիք, կրնաք ամբողջ մանրամասնութիւնները տեսնել. մենք միայն մեծ պատկերը կը տեսնենք:**

**Ի. Ն.** Ինչ որ Հայաստանի մէջ տեսայ, ցնցեց զիս – բառին դրական իմաստով ... Երբ Հայաստան դադրի զիս հմայելէ, այն ատեն է որ այս փորձառութիւնս իր աւարտը պիտի գտնէ: Մինչեւ այսօր այդ հմայքը ոչ միայն չէ դադրած, այլ՝ աւելցած է: Կը կարծեմ թէ ասոր գաղտնիքը այն է, որ այս տարածաշրջանէն շատ ցեղեր անցած են, շատ եւ տարբեր մշակոյթներ. այս



շրջանը ընդհանուր մարդկության հետ խորունկ աղերս ունի, որ մեզ բոլորս կը կապէ անոր: Ասոր համար է, որ Հայաստան պէտք չէ դուրս մնայ մարդկային պատմութեան հիւսուածքէն, ճիշդ փարաւոնեան մշակոյթին պէս, որուն ամբողջ աշխարհը ծանօթ է, մինչ հայկականին եւ Հայաստանի մասին շատեր քիչ բան գիտեն, չըսելու համար՝ ոչինչ գիտեն: Ինչ պէտք է ընենք ուրեմն: Կը վերադառնամ հարցումիդ՝ թէ ինչո՞ւ բան մը չեմ ըրած եզրատահայերուն մասին. որովհետեւ ես կ'ուզեմ որ աշխարհը Հայաստանի՝ մասին իմանայ՝ հողին, մարդոց: Մեծ թիւով հայեր սփիւռքի մէջ կ'ապրին, այսինքն՝ հայկական մշակոյթը ներկայ է սփիւռքի մէջ, բայց Հայաստանի մշակոյթը ... Ահա թէ ինչո՞ւ կ'ուզեմ արեւելահայերէն սորվիլ եւ ոչ՝ արեւմտահայերէն. ես կ'ուզեմ այս ժողովուրդին, այս երկրին ձայնը դառնալ:

Այնքան բան կայ Հայաստանի մէջ: Նոյնիսկ ժամանակակից երաժշտութիւնը, երիտասարդական խումբերը՝ Էլէմէնտ, Լատանիվա, Լաւէլի այնքան յաջող են ...

**Տ. Ինչպէս նաեւ ճազի հոյակապ խումբեր:**

**Ի. Ն.** Այո՛, որոնք սակայն մեծ ճանա-

չում չունին Հայաստանէն դուրս, թէւ իրենց տաղանդով արժանի են մեծ հռչակի: Սփիւռքը պէտք չէ՞ ասոնց հրաւիրէ, ծանօթացնէ աշխարհին:

**Տ. Սփիւռքահայերը իրենց կարողութեան չափով եւ ունեցած միջոցներով կ'օգնեն:**

**Ի. Ն.** Օրինակ՝ ես չեմ ուզեր որ Տիգրան Համասեան եզրատոս գայ եւ միայն հայերուն համար ելոյթ ունենայ, պէ՛տք է եզրատոսի ժողովուրդն ալ լսէ զինք եւ գնահատէ իր արուեստը:

Ինչպէս որ մեր գրոյցին սկիզբը ըսի՝ իւրաքանչիւրս իր կենսափորձին արդիւնքն է, մարդ ինքզինք ամբողջացած կը զգայ միայն այն ատեն, երբ կրնայ իր շրջապատին բան մը տալ: Այս առումով ես կրցայ Հայաստանին բան մը տալ, ոչ թէ փոխարէնը ստանալու համար, այլ որովհետեւ համոզուած եմ, որ տուածս օգտակար է երկրին: Օր մը երբ հեռանամ կեանքէն, բան մը տուած պիտի հեռանամ: Հայաստանը իրապէ՛ս կարիք ունի մեր բոլորին տալիքին, մեր բոլորին ունեցած կարողութիւններուն, մանաւանդ որ այսօր երկիրը քաղաքականօրէն կ'ապրի աննախընթաց վիճակի մը մէջ, որովհետեւ այսօր մեր երկրին կարեւորագոյն բաժինը կորսնցնելու եզրին ենք: Թերեւս չունինք պէտք եղած լծակները, բայց դարձեալ չենք կրնար ականատեսի դերին մէջ գտնուիլ, գիտակցութիւնն ու կացութեան հասու ըլլալը շատ կարեւոր են: Հայաստանը ոչ լաւաշ է, ոչ *պաստրըմա*, ոչ ալ «Տլէ Եաման»: Հայաստանը մեզի պէտք ունի այսօր:

Քանի մը օր առաջ կը դիտէի Տանքըրքի<sup>1</sup> մասին ֆիլմը, որ կը պատմէ թէ ինչպէս Համաշխարհային Բ. պատերազմին, երբ անգլիացի չորս հարիւր հազար զինուորներ շրջափակուած էին, Չըրչիլ ղրկեց բոլոր ձկնորսական նաւերը, որոնք

<sup>1</sup>Ֆրանսայի հարաւը գտնուող երրորդ մեծագոյն նաւահանգիստը, Պելճիքայէն տասը քմ. հեռաւորութեան վրայ, ուր 26 Մայիսէն մինչեւ 4 Յունիս 1940-ին, կախարուած է փրկարարական մեծագոյն գործը՝ չորս հարիւր հազար անգլիացի եւ ֆրանսացի զինուորներ, որոնք շրջափակուած էին գերմանական բանակին կողմէ Համաշխարհային Բ. պատերազմին, կրցած են ազատիլ ստոյգ մահէ:



կրցան փրկել զինուորները, բարոյական մեծ նեցուկ դառնալով պատերազմէն ընկճուած ժողովուրդին: Անգլիացիները աւելի՞ հայրենասէր են ...

**Տ. Թերեւս իրենք աւելի խորունկ գիտակցութիւն ունին, քան մենք:**

**Ի. Ն.** Սեպենք թէ ճիշդ է ասիկա, կը նշանակէ եթէ չփորձենք աւելի գիտակից ըլլալ, ամէն օր բան մը պիտի կորսնցնենք: Ինչ որ տեսայ այն է, թէ այո, մարդիկ նեղուած են, կոտրած, բայց նաեւ իրաքանչիւրը իր գործին է, կարծես տարբեր նահանգ ըլլար Սիւնիքը:

**Տ. Ասիկա գիտակցութեան պակասի արդիւնք չէ՞:**

**Ի. Ն.** Ընտրութիւն է:

**Տ. Ընտրութիւն՝ այո, բայց ընտրութիւնն ալ կը կատարուի գիտակցութեամբ:**

**Ի. Ն.** Նայի՛ր, կրնանք երկա՛ր նստիլ եւ վերլուծել, թէ ինչո՛ւ այս այսպէս եղաւ: Պէ՛տք է սակայն գործի անցնիլ, բան մը ընել այսօ՛ր, ապա թէ ոչ վաղը, նոյնիսկ քանի մը ժամ ետքը կրնայ ուշ ըլլալ: 2020-ի պատերազմին ես ականատես էի, թէ Սփիւռքը որքա՛ն տուաւ, քանի քանիներ գացին կռուեցան եւ զոհուեցան: Բայց յաղթանակ չունեցանք: Մեռնողը մեռաւ, հողը գնաց ...

**Տ. Ինչ որ կ'ըսեմ այն չէ թէ պէ՛տք է նստիսք խօսիսք կամ վերլուծենք, թէ ինչո՛ւ այսպէս եղաւ, ո՛չ, այլ՝ ինչպէ՛ս, ի՞նչ միջոցներով կարելի է դարմանել կացութիւնը, վերադարձնել եթէ ոչ զոհուած սերունդը, ապա գոնէ հողը:**

**Ի. Ն.** Թշնամին ա՛յս կ'ուզէր՝ Սփիւռքը հայրենիքէն անջատել ... եւ յաջողեցաւ դժբախտաբար: Այլ ցաւ է այն, որ սփիւռքահայը կ'երթայ հայրենիք զբօսաշրջիկ որպէս, եւ ... յուսախաբ կ'ըլլայ տեսածով եւ ստացած վերաբերմունքով: Պէտք չէ մոռնալ որ սփիւռքահայը պատմութիւնը ուղղակիօրէն լսեց եւ չապրեցաւ այն, ինչ որ Հայաստանի ժողովուրդը ապրեցաւ 70 տարի սովետական իշխանութեան թաթին տակ: Սփիւռքահայը մէկ բան կրնայ ընել՝ զգացնել Հայաստանի ժողովուրդին, որ ինք առանձին չէ, ճիշդ է որ նիւթականը կարելոր է, սակայն այդ ժո-



ղովուրդին հե՛տ ըլլալը աւելի կարելոր է. պէտք է երթալ, հոն ապրիլ, իրենց հետ կրել ինչ որ իրենք կը կրեն ... Երբ «Մոռացուած Հայրենիք» ֆիլմը կը պատրաստէի, ամենէն աւելի կը լսէի «Մենք կը կարծէինք թէ առանձին ենք» խօսքը, որ սիրտս կը կոտրէր ... Իսկ հիմա՝ աւելի եւ աւելի համոզուած են, որ իրենք առանձին են եւ ոչ ոք մտահոգուած է իրենցմով. որո՞ւ պատասխանատուութիւնն է ասիկա, եթէ ոչ մերը՝ իմս, քուկդ ... Սկսեր են ինձմէ նեղուիլ, երբ ճշմարտութիւնը կ'ըսեմ՝ դուք կրնա՛ք ապրիլ այն, ինչ որ Ստեփանակերտի մէջ մայր մը ապրած է, թաղելէ ետք իր ամուսինն ու զաւակները ... դուք կրնա՛ք այդ կնոջ ցաւը զգալ: Եթէ իրապէ՛ս «քո հայրենիք» է (եւ այս երկու բառերը հայերէն ըսաւ) ուրեմն գնա՛, կեանքդ մաս մը հոն անցուր, ժամանակէդ տուր: Հայաստանը խորապէս ներշնչող երկիր է, զոր կարելի չէ, պէտք չէ վերածել մակերեսային զբօսաշրջութեան կեդրոնի: Մեծ հոգ պէտք է տանիլ այս երկրին, ուր ամենէն փոքր մանրամասնութիւնն իսկ իմաստ կը ստանայ: Շատ բան



կայ ըսելիք անշուշտ:

**Տ. Ի՞նչ կը կարծէք թէ այսօր եգիպտահայ գաղութը կրնայ ընել Հայաստանի համար:**

**Ի. Ն.** Եգիպտահայութիւնը հաւատարիմ է իր երկու հայրենիքներուն՝ Եգիպտոսի եւ Հայաստանի միաժամանակ: Ինչպէս ըսի՝ հոն, Հայաստանի մէջ ըլլալն է ամենէն կարելորդ այս պահուս, որովհետեւ Հայաստանի ժողովուրդը պէտք ունի իր կողքին կեցողներու, պէտք ունի իր պէտքերը զգացողներու եւ հասկցողներու: Կարելի է ցանկ կազմել տեսնելու թէ ի՞նչ են կարիքները՝ օրինակ եթէ մասնագէտ բժիշկներու պէտք կայ ...

**Տ. Բայց արդէն այնքա՞ն սփիւռքահայեր կ'ապրին եւ կ'աշխատին Հայաստանի մէջ:**

**Ի. Ն.** Նաեւ եթէ սփիւռքահայերը իրենց մասնագիտութիւններու փորձառութիւնը տանին, երկրին տնտեսութիւնը կը սկսի ոտքի կանգնիլ:

Նկարահանումներուն սկսելէ առաջ ըսեր էի, որ կ'ուզեմ խօսիլ մէկու մը հետ, որ ապրած է Արցախի պատերազմը. ըսին թէ կա՛յ այդպիսի մէկը՝ զինուոր մը, որ մէկ ոտքը կորսնցուցեր է այդ պատերազմին, բայց տուն գալէ ետք բնաւ չի խօսիր. իր ծնողքին իսկ չէ խօսած պատերազմին

մասին. ինչպէ՛ս պիտի խօսիս իր հետ... Ես գամերային ետեւն էի. սկսաւ խօսիլ. ոչ իսկ մէկ անգամ ընդմիջեցի զինք... Պէ՛տք է մարդիկ լսեն թէ ինչ կ'ըսեր այդ զինուորը՝ Յարութ Քոչարեանը, որուն յետոյ հրաւիրեր էինք Ոսկէ Ծիրան փառատօնին եւ շնորհակալութեան յուշատախտակ մը նուիրեցինք իրեն: Յարութ Քոչարեան ֆիլմին մէջ կ'ըսէ՝ «Պատերազմ լինի, էլի՛ կը գնամ, թէկուզ էս վիճակով»: Այս զինուորը մինչեւ այսօր իր տան մէջ է, հողին վրայ, որ թշնամիին գիծէն միայն 20 քմ. հեռու է, ո՛չ փախած է, ոչ հեռացած: Սփիւռքահայը պէ՛տք է այս զինուորին խօսքը պահէ իր հոգիին մէջ, ներշնչով անով:

Ասոնք պահեր են, որ սփիւռքահայերը պէ՛տք է ապրին իրենց մորթին վրայ, որովհետեւ հողին վրայ ապրող մարդոց ձայնը լսելը շա՛տ տարբեր է լուրեր լսելէն, այլ ազդեցութիւն ունի:

**Տ. Յառաջիկային համար որեւէ նոր ծրագիրներ ունի՞ք, կրնա՞ք խօսիլ անոնց մասին:**

**Ի. Ն.** Շատ ծրագիրներ ունիմ. ինը ամիսէ ի վեր կ'աշխատիմ նոր ծրագրի մը վրայ՝ կրթա-մշակութային ձեռնարկ մը, որուն մասին շատ չեմ կրնար խօսիլ տակաւին, որովհետեւ տակաւին վերջնական ձեւ չէ առած:

**Տ. Իսկ այս բոլորին համար նիւթականը ինչպէ՛ս կ'ապահովէք, որովհետեւ բոլորս ալ գիտենք, որ նիւթականի ապահովութիւնը բաւական ծանր հարց է:**

**Ի. Ն.** Այս նոր ծրագիրս բաւական ծախսալից ձեռնարկ մըն է, բայց շատ strategic, կապուած Մեղրիի: Ոչ միայն նիւթականի կարիք ունինք, այլ նաեւ կարիք ունինք որ սփիւռքահայը հողին վրայ ըլլայ, գոնէ որոշ ժամանակի մը համար եւ իր մասնագիտական փորձառութիւնը փոխանցէ:

**Տ. Այս ծրագրին համար խումբը որոնցմէ՞ կը բաղկանայ՝ հայե՛րէ թէ օտարներէ:**

**Ի. Ն.** Տակաւին փնտռտուքի մէջ ենք:

**Տ. Շնորհակալութիւն կը յայտնենք այս այնքա՞ն հետաքրքրական եւ օգտաշատ գրոյցին համար:**





## ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՓՐԿԷ ԱՇԽԱՐՀԸ

ՄԷԿ շաբաթ տեւած անվերջ, անդադար անճրեւներէն ետք Աղեքսանդրիոյ երկինքէն արեւ ճառագեց: Դժկամօրէն հեռացան սեւ ամպերը: Մռայլ, լալկան երկինքէն ազատագրուած արեւը կապանքներէն փրկեց իր շողերը: Ծովը կը պեծպեծայ արեւի հատիկներէն: Արեւ է հագել գրադարանը՝ հինաւուրց ու նոր: Աղեքսանդրիոյ մարդաշատ գրադարանն այսօր աւելի բազմամարդ է: Սովորաբար գրադարանի բազմութիւնը լինում է երիտասարդ, բայց այսօր երկարամազերուն եւ մօրուքաւորներուն քանակը կը գերակշռէ: Արուեստագէտ եւ արուեստասէր հասարակութիւնը սպասման մէջ է:

Արեւավառ այս օրը Աղեքսանդրիոյ գրադարանը մե՛ծ ձեռնարկ ունի: Ամէն տարի այստեղ համաեգիպտական արուեստագէտներու ստեղծագործութիւններու ցուցադրութիւն կը բացուի՝ «AGENDA»: Այս ցուցադրութիւնները գրադարանին արուեստի բաժինը, 2008 թուականէն սկսեալ, ամէն տարի ինք կը կազմակերպէ: 800 արուեստագէտ փափաքած է մասնակցիլ այս տարուան ցուցադրութեան, բայց ընտրուած է միայն 450-ը: Կան առաջին անգամ մասնակցողներ, կան երիտասարդներ, փորձառուներ, բազմաթիւ ցուցադրութիւններ տեսած, վաստակած, մեծ ճանաչում ունեցող արուեստագէտներ: Մարդն այնքան է մեծ, որքան մեծ են անոր երազները: Իսկ արուեստագէտի երազները տեսանելի են իր ստեղծագործութիւններուն մէջ: Ինչ որ արուեստագէտը կը տեսնէ իր շուրջ, պարզ մարդը յաճախ չի նշմարեր: Արուեստագէտը իր սրտի՛ աչքով կը տեսնէ ու կը զգայ աշխարհը, իրերը, երեւոյթները, յաւերժապէս յարափոփոխ կեանքը... Արուեստի մարդուն տեսած-զգացածը կը դառնայ



գծագութիւն, արձան, երաժշտութիւն, բանաստեղծութիւն...

Կը մտնես ցուցադրութեան սրահները եւ կը յայտնուիս հեքեաթային աշխարհի մը մէջ: Աշխարհ մը ուր ե՛լ արեւ կայ, ե՛լ խաւար, ծիծաղ կայ եւ լաց, տխրութիւն եւ ժպիտ, եւ գոյներ, գոյներ, գոյներ ...

Նկարներէն մէկը՝ երաժիշտներ կը նուագեն, բայց երաժշտութիւնը ո՛չ ծուլօրէն նստած կատուին կը յուզէ, ո՛չ ալ նարգիլէ ծխող մարդկանց: Արձանախումբ մը՝ քառակուսի, տխուր դէմքեր մտազբաղ, հոգսաշատ եւ ո՛չ մէկ լոյս, ո՛չ մէկ յոյս նշմարելի է, գոնէ հեռուէն: Իսկ այս խորամանկ կինը գլխուն պսակ ունի եւ օձանման վարսեր. պաղ աչքերով կը գննէ շուրջը եւ ... Ուշագրաւ է փոքրիկ ջրաւազան յիշեցնող, ոչ նկար-ոչ արձանը, որուն մէջ իբր թէ կը լողան բազմաթիւ միանման կաւէ ճուտիկներ, որոնք ունին շատ խոշոր, գուցէ առաջնորդ մը, գուցէ մայրի՞կ մը. կայ նաեւ թագակիր ճուտիկ մը եւ ուրիշ մը՝ գունաւոր: Մտածել կու տայ:

Բազմազան են ու բազմագոյն գործերը: Դիտողները աւելի խննուած են ճանաչուած ստեղծագործողներու գործերուն շուրջ:

Փորձառու եւ հանրածանօթ արուեստագէտներուն մէջ է եգիպտահայ ծանօթ արձանագործ, բազմաթիւ տարեկան, միջազգային ցուցադրութիւններու, **պիէնալէ**ներու, մրցոյթներու մասնակից, նաեւ յաղթող, Հայաստանի Հանրապետութեան Նկարիչների Միութեան պատուաւոր անդամ Սարգիս Թօսունեանը: Եգիպտահայ արուեստագէտը իւրաքանչիւր ցուցադրութեան նոր փայլով կը ներկայանայ: Այո՛, փայլով, որովհետեւ այլեւս ի՛ր անձնական ոճը դարձած



արձաններուն առանձնակի փայլը չի շփոթուիր ո՛չ մէկ այլ արուեստագէտի ստեղծագործութեանց հետ: Հայ անուանի արձանագործը նոյնիսկ տխրութիւնը, պայքարը, բողոքը, վիշտը իրեն յատուկ փայլքով կ'արտայայտէ: Այս ցուցահանդէսին Սարգիս Թօսունեան մասնակցած է երեք գործով: Արձանները գեղեցիկ են, խորիմաստ եւ փայլով: Դարձեա՛լ փայլով: Պարզ փայլ մը չէ: Փայլը խորհուրդ կը պարունակէ, վստահութիւն, յոյս, լոյս... Այս ամբողջը ստեղծագործ մարդուն ներքին բնոյթն է: Կը տեսնէ մարդուն խնդիրները, կը հասկնայ տրտունջները, բայց մի մեծ յոյս, լաւատեսութիւն ու լոյսի փայլ կը փոխանցէ դիտողին: Կարծես կեանքի, մարդկային հոգերն ու դժուարութիւնները կ'ամբարէ հոգիին մէջ եւ արձանին կը հաղորդէ իր լաւատեսութիւնը, հոգու ջերմութիւնը, սէրը եւ մեծ հաւատքը մարդուն հանդէպ: Փոքրամարմին մարդուկները առաջին հայեացքէն տխուր տպաւորութիւն կը ձգեն, բայց կանգնած են հպարտ, շիտակ եւ իւրաքանչիւրին վրայի փայլող ժապաւէնը լաւատեսութիւն կը ճշայ: Դառնութիւններ կան կեանքի մէջ, բայց անցողիկ են՝ շուտով արեւ կը ծագի եւ բեռան տակ կը բաժ մարդը կը շողայ, կը փայլի պայծառութեամբ: Բարի եւ նրբազգաց արուեստագէտ Սարգիս Թօսունեան չի կրնար անտարբեր ըլլալ աշխարհի, կեանքի անցուդարձին հանդէպ:

Արուեստի մեծ խառնարան մըն է Աղեքսանդրիոյ գրադարանին «AGENDA» ցուցադրութիւնը: Ժամանակները խառն են ու խրթին, եւ կարծես կ'եռայ մեր փխրուն երկրագունդը՝ պատերազմ, երկրաշարժ, յեղափոխութիւն, ցոյցեր, հիւանդութիւններ, անհանդարտ վիճակ ... Աշխարհի այս վիճակը չի կրնար չարտայայտուիլ արուեստի մէջ, քանզի արուեստը կեանքի բիրեղացած արտայայտութիւնն է:

**Անժիկ Յակոբեան-Կանիմեան  
Աղեքսանդրիա**





## «ԵԳԻՊՏՈՍԷՆ ՆՈՒԷՐ ԱՇԽԱՐՀԻՆ»

Այսպես սկսաւ իր խօսքը եւ այսպէս որակեց դոկտ. Մարի Քիւփէլեան Եգիպտոսի Մեծ Թանգարանը (Great Egyptian Museum), որուն անուան անգլերէն յապաւումը՝ GEM, գոհար կը նշանակէ:

Իրապէս ալ գոհար մըն է Եգիպտոսի Մեծ Թանգարանը, որուն բացումը թէեւ կատարուած չէ տակաւին, սակայն անոր մասին խիստ հետաքրքրական դասախօսութեամբ մը ելոյթ ունեցաւ դոկտ. Մարի Քիւփէլեան, Ուրբաթ, 17 Մարտի կէսօրուան ժամը մէկ ու կէսին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ սրահէն ներս, հրաւերովը ակումբին Տիկնանց Յանձնախումբին (Դոկտոր Մարի Քիւփէլեանի կենսագրական եւ աշխատանքային տուեալներու համար նայիլ «Տեղեկատու» Թիւ 102 նոր շրջան, Յունուար 2022, էջ 12):

Դոկտ. Քիւփէլեան իր խօսքը նախ սկսաւ հարցումով՝ ի՞նչ է թանգարանը. արդեօ՞ք անիկա մեր մանկութեան այցելած Թահրիր հրապարակի (Գահիրէ) թանգարանն է՝ լեցուն, գրեթէ թխմուած ցուցանմոյշներով եւ փոշեթաթախ:

Թանգարանները սկսած են որպէս ամբարներ, պահ դնելու համար այն բոլոր գեղեցիկ եւ թանկարժէք արուեստի գործերն ու հնութիւնները, որոնք ժամանակի ընթացքին մարդիկ հաւաքած են:

Այսօր սակայն, նկատի առնելով թէ Եգիպտոսը որքա՞ն հարուստ է հնութիւններով, երկրին վսեմաշուք նախագահը փափաքած է, որ այս թանգարանը նախ իր մեծութեամբ եւ հարստութեամբ մրցի համաշխարհային այլ թանգարաններու, ինչպէս Լուվրի (Փարիզ), Մեթի (Նիւ Եորք), Լոնտոնի թէ Գերմանիոյ թանգարաններուն հետ, եւ յետոյ՝ նուէր մը ըլլայ Եգիպտոսէն ամբողջ աշխարհին եւ ամբողջ մարդկութեան համար:

Եւ որովհետեւ նուէր է, պէտք է լաւագոյնը ըլլայ:

Անշուշտ նախ պէտք էր որոշուէր վայրը. եւ ո՞ր ակտիւ յարմար, գեղեցիկ եւ ճիշդ վայր, քան բուրգերուն հանդիպակաց կողմը, նոյն առանցքին վրայ, միայն 2 քմ. հեռու, կարծէք նորը խոնարհում մը ըլլայ



հինին եւ մեծին, իսկ հինը իր շուքը ձգէ նորին վրայ:

Կառոյցը, համաշխարհային մրցումներէ ետք, տրուած է շահող խումբին՝ heneghan peng իրլանտական ճարտարապետներու խումբին:

Պէտք է սակայն հպարտութեամբ նշել, որ անոնց սկզբնական գծանկարները Եգիպտացի մասնագէտները իրենք կրցած են հասցնել լաւագոյնին, ներդնելով ինչ որ իրենք յարմար դատած են կառոյցին համար:

Ուշադրութեան արժանի է նաեւ այն իրողութիւնը, որ այս կառոյցը սոսկ թանգարան մը չէ միայն, այլ՝ համալիր մը, որովհետեւ իր հսկայ՝ 81,000 քառակուսի մեթր տարածքի մուտքին ընդունելութեան հսկայ սրահ մը ունի, ձախ թելը թանգարանն է, իսկ աջ թելին վրայ կը գտնուին ուսումնասիրութեան, վերանորոգումի, մանուկներու եւ այլ կարելոր սրահներ, աշխատանոցներ, տարրալուծարաններ եւ գրասենեակներ: Մէկ խօսքով՝ թանգարանային ամբողջական համալիր մը:

Թերեւս օտարները չեն գիտեր այն իրողութիւնը, թէ Եգիպտոսի 27 մարզերէն իւրաքանչիւրը ունի իր թանգարանը, նկատի առնուած ո՛չ միայն Եգիպտոս այցելող զբօսաշրջիկներուն, այլ նաեւ տեղացի ժողովուրդին համար:

Բաւական մեծ են նաեւ համալիրը շրջապատող պարտէզները, որոնք նոյնքան մտածումի, հոգածութեան եւ գուրգուրանքի առարկայ դարձած են. օրինակ այնտեղ կան հին Եգիպտոսի մէջ ցանուած բոյսերէն նմոյշներ, ինչպէս երկրին խորհրդանիշը դարձած լոտոս ծաղի-



կը եւ պապիրոս բոյսը, հնօրեայ վերականգնուած այլ բոյսեր, աւազաններ եւ զբօսանքի տարածքներ, որ եթէ ժողովուրդը ուզէ հաճելի պահեր անցընել, կարենայ օգտուիլ այդ շրջապատէն:

Մուտքի սրահին մէջ երկու շատ կարելոր արձաններ կ'իջխեն. մէկը աւազանի մը մէջ կանգնած Րամսէս II թագաւորին հսկայական, 83 թոն կշռող արձանն է, որ անշուշտ խորհրդանիշն է երկրին ոյժին, միաժամանակ կը դիմաւորէ այցելուները: Երկրորդը նոյն թագաւորին **օպէլիսք**ն է, որ ներկայացուած է չորս բարձր սիւներու վրայ հանգչած, առիթ տալու համար այցելուներուն տեսնել եւ կարդալ (անշուշտ բացատրող տախտակներուն օգնութեամբ) անոր տակ գրուած **քարթուշը**, բան մը, որ առաջին անգամն է որ կը տեսնուի. որովհետեւ թէեւ աշխարհի մեծագոյն թանգարանները գոնէ մէկական նմոյշ ունին այս հսկայ սիւներէն (Եգիպտոսէն տարուած, չըսելու համար գողցուած), ոչ մէկ թանգարան ա'յս ձեւով ցուցադրած է իր նմոյշը:

Ի միջի այլոց պէտք է յիշել, որ Եգիպտոսի մէջ շատ արագ բազմացող նոր քաղաքներէն իւրաքանչիւրին մուտքին զետեղուած է նման **օպէլիսք** մը:

Ձախ թելին դրուած է Grand Stairs-ը՝ 108 հսկայ աստիճաններ, ուր ցուցադրուած են 68 շատ մեծ արձաններ:

Ամբողջ թանգարանին մէջ պիտի ցուցադրուին փարաւոններու ժամանակներէն մինչեւ յունա-հռոմէական ժամանակաշրջանի հնութիւնները, որոնք արդէն տասնեակ մը հազար կը հաշուեն:

Կարելոր եւ ամէն տարի կրկնուող եղելութիւններ նաեւ նկատի առնուած են, ինչպէս օրինակ ամէն Փետրուար եւ Հոկտեմբեր ամիսներուն արեւին ծագիլը ուղղակի Րամսէս թագաւորին դէմքին, որուն համար այս տարի իսկ մեծ թիւով զբօսաշրջիկներ եկած են տեսնելու այդ աստղաբաշխական եւ ճարտարապետական բարդ հաշիւներուն արդիւնքը:

Թանգարանին տակ պատրաստուած է փապուղի մը, ուրկէ բերուած են թանգարանային մեծ կտորները, առանց ստիպուելու մտնել քաղաքի թոհուրոհին մէջ:

Թանգարանը ունի նաեւ ոչ միայն մէթ-



րոյի իր յատուկ կայարանը, որ կը կոչուի՝ Եգիպտոսի Մեծ Թանգարանի կայարան, այլ նաեւ... օդակայանը:

Անշուշտ մտածուած են բոլոր միջոցները՝ թաքսի, փոքր թէ մեծ պասեր, կարելի դիրութեամբ թանգարան հասնելու համար:

Տասնեակ մը պետութիւններ եւ մեծ ընկերութիւններ մասնակցած են այն հսկայ ծախսերուն, որոնց կը կարօտի նման կառոյցի մը պատրաստութիւնը: Սակայն վերջին քանի մը տարիներու տնտեսական անկումը պատճառ դարձած է, որ շատեր այս երկիրներէն եւ ընկերութիւններէն քաշուին: Ճաբոն միակ երկիրն է, որ կը շարունակէ տակաւին ամէն առումով նեցուկ կանգնիլ GEM-ին:

Դոկտ. Մարի Քիւփէլեան երախտագիտութեամբ յիշեց դոկտ. Խալէտ Ալ Անանի, Զբօսաշրջութեան եւ Հնագիտութեան նախկին նախարարը, որ շատ մեծ ներդրում ունեցած է այս թանգարանին մէջ:

Հպարտութեամբ ըսաւ նաեւ, որ այսօր թանգարանին ամենէն կարելոր՝ նորոգութեան բաժնին մէջ աշխատողները բոլորն ալ եգիպտացիներ են, մագիստրոսական եւ վարդապետական աստիճաններու տիրացած երիտասարդներ, որոնց գոյութիւնը յոյսով կը լեցնէ բոլորս այս ասպարէզին ապագային նկատմամբ, մանաւանդ երբ կը յիշենք, թէ ժամանակին որքան բան գողցուած է երկրէն, օտար հնախոյզներու ձեռքով:

Յատուկ դասընթացքներ կը տրուին անոնց, որոնք որպէս ուղեցոյց պիտի աշխատին թանգարանէն ներս:

Յատուկ ծրագիր կայ նաեւ դպրոցական աշակերտներուն համար, որպէսզի անոնք սորվին թանգարան այցելել, դիտել, գնահա-



տել եւ հասկնալ, թէ այս բոլորը որոշ չափով նաեւ իրենց կը պատկանի:

GEMը, այլ թանգարաններու նման միայն զբօսաշրջութեան համ հնագիտութեան նախարարութիւններուն չի պատկանիր. անոր տէրը պետութիւնն է, տասնեակ մը նախարարութիւններու մշտական աշխատանքով:

Մեծ գնահատանք ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՏԻ-

կիններուն, որոնք մտածած էին Միջինքի բաց սեղանին շատ համեղ ճաշերէն առաջ մեր հոգիները յագեցնել եւ մեզ հպարտութեամբ լեցնել նման դասախօսութեամբ մը:

Յարատել եռանդ եւ մշտակայ առողջութիւն դուրս. Մարի Քիւփէլեանին, իր աշխատանքը թափով շարունակելու համար:

## ՄԻՋԻՆՔՆ ՈՒ ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՋԱՐԸ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Ուրբաթ, 17 Մարտ 2023-ին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՏԻ կնանց Յանձնախումբը Միջինքը նշելու ձեռնարկ մը կազմակերպած էր, որուն համար հրաւիրած էր Դուրս. Մարի Քիւփէլեան, որ հանդէս եկաւ «Եգիպտական Մեծ Թանգարանը՝ GEM» նիւթով:

Հո՞ծ թիւով ներկաներ եկած էին տեղեկութիւն քաղելու այս շատ այժմեական ու հետաքրքրական նիւթին մասին. «Եգիպտական Մեծ Թանգարանը», որուն շինութիւնը սկսած է 2012-ին, երբ հանրութեան համար բացուի 2023-ի վերջաւորութեան, պիտի ըլլայ աշխարհի ամենամեծ ու ամենաճոխ թանգարանը, որ նուիրուած է մէկ նիւթի՝ փարաւոնական հնութիւններուն:

Յարգելի Դուրս. Քիւփէլեան, որ կատարելապէս տիրապետած է այս նիւթին, իր պարզ ու անմիջական մօտեցումով կարողացաւ ունկնդիրները կեդրոնացած պահել աւելի քան մէկ ժամ: Շատեր հարցումներով մօտեցան իրեն, մինչ Միջինքի պահքի ուտելիքներու ազատ շքասեղանը կը սպասէր համտեսողներուն:

\* \* \*

Կիրակի, 2 Ապրիլ 2023-ին, Ծաղկազարդի օրը, Զատկուան Պազար կազմակերպած էր ակումբին Տիկնանց Յանձնախումբը: Բացումէն շատ առաջ, անդամներ ու համակիրներ եկած էին իրենց տեղերը գրաւելու մարգագետնին վրայ շարուած ու գեղեցկօրէն զարդարուած սեղաններուն շուրջ: Անոնցմէ շատեր, չկարենալով զսպել իրենց հետաքրքրութիւնը, կը մօտենային սրահին առջեւ

շարուած Պազարի սեղաններուն եւ քննական ակնարկներ կը նետէին ցուցադրուած այլազան ապրանքներուն վրայ:

Հոն էին չէօրէկն ու խմորեղէնը, լիցքն ու պէօրէկը, ապուխտն ու երշիկը, մանթըն ու քաղցրեղէնը, շոքոլան ու Զատկուան զարդը՝ գունաւոր հակիթը:

Պազարին բացումը կատարեց օրուան նախագահուհին՝ շնորհալի Տիկն Սարին Աւագեանը: Կարճ ժամանակի մէջ ցուցադրուած ապրանքներէն շատեր արդէն իսկ կը բացակայէին Պազարի սեղաններէն:

Շուտով սկսաւ ճաշի ազատ սպասարկումը. ներկաները համտեսեցին ակումբի խոհարարին պատրաստած ճաշերը: Մինչեւ ուշ երեկոյ ակումբը լեցուն էր ու աշխոյժ:

\* \* \*

Երկուշաբթի, 17 Ապրիլ 2023-ին Շամել-նէսիմի առթիւ, կոկիկ բազմութիւն մը եկած էր, Փարաւոնական տոմարին համեմատ գարնան առաջին օրը նշող տօնը անցընելու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանին դալարագեղ պարտէզին մէջ:

Ակումբին երիտասարդներէն քանի մը հոգի փոքրիկները զբաղած պահեցին զանազան մրցումներով, իսկ վարչակառուի Տիկն Նայիրի Սիմոնեան կազմակերպեց Bingo-ն, որուն շուրջ հաւաքուեցան ներկաները:

**Սօսի Ներերպեան-Յակոբեան**  
**Ապրիլ 2023**



## «ՀԱՅԵՐԸ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ԱՅՍՕՐ»

Գահիրեի Համալսարանի Արեւելեան Լեզուներու Կաճառին Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին կազմակերպութեամբ եւ սոյն խորագրով միօրեայ համագումար մը տեղի ունեցաւ Շաբաթ, 4 Մարտ 2023-ին, հովանաւորութեամբ Գահիրեի Համալսարանի Տնօրէն դոկտ. Մոհամմէտ Օսման Ալ Խոշթի, փոխանորդ դոկտ. Մոհամմէտ Սամիի, Գրականութեան կաճառի տնօրէն դոկտ. Ապիր Ապտ էլ Սալամի, եւ գործակցութեամբ Եգիպտոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան, որուն կապուած է Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը. այս վերջինին նիւթականը կ'ապահովէ ՀԲԸՄիութեան Շրջանակային Յանձնաժողովը:

Դոկտոր Տիա Ապուլ Ֆութուի հանդէս եկաւ բացման խօսքով եւ նշեց կարեւորութիւնը այս Կեդրոնին:

«ՀՀ դեսպան տիար Հր. Փոլատեան խօսք առաւ, շեշտեց Եգիպտոսի եւ Հայաստանի ջերմ կապերը եւ յիշեց վերջերս նախագահ Ապտէլ Ֆաթթահ էլ Սիսիի Հայաստան այցելութիւնը:

Դոկտ. Սուհէր էլ Տուէյնի, Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի տնօրէնուհին խօսք առաւ շնորհակալութիւն յայտնելով ներկաներուն, մասնաւորաբար հայոց լեզուի դասախօսուհի Լիլիա Յարութիւնեանին, ապա ներկայացուց Կեդրոնին աշխատանքները, որոնցմէ նորագոյնը «Փարոս» հանդէսին հրատարակութիւնն է, երկու համալսարաններուն՝ Գահիրեի Համալսարանին եւ Երեւանի Արեւելագիտութեան կաճառին գործակցութեամբ:

Համագումարի առաջին բաժինը կը կրէր «Չարենց 125 եւ Հայաստան» խորագիրը:

Ելոյթ ունեցաւ Կեդրոնի ուսանողուհիներէն Խլուտ Եագուպ, ապա երեք այլ ուսանողներ հայերէն լեզուով զրոյց մը ներկայացուցին, որմէ ետք կարճ ֆիլմ մը ցուցադրուեցաւ Հայաստանի տեսարժան վայրերուն մասին:



Ուսանողները նաեւ ասմունքեցին Չարենցի «Ես իմ Անոյշ Հայաստանի» քերթուածը:

Առաջին բաժինը վերջ գտաւ ՀՀ դեսպանին տիկնոջ՝ Զարա Պալայեանի խօսքով:

Երկրորդ բաժնին իրենց մասնակցութիւնը բերին դոկտ. Կամալ Քամալ, որ նախ խօսեցաւ Հայոց պատմութեան եւ Հայաստանի յարաբերութիւններուն մասին, ապա ներկայացուց հայերուն գոյութիւնը Եգիպտոսի մէջ, օսմանական տիրապետութեան շրջանին:

Համագումարին ներկայ էին ՀՀ դեսպան տիար Հր. Փոլատեան եւ ազնիւ տիկինը, Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան, Բարեջան Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին, Արհիպատիւ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, Վիճակաւոր Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքին, Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ տորթ. Արմէն Մազլումեան, Դոկտ. Մարի Քիւփէլեան, տորթ. Գոհար Վարժապետեան, բեմադրիչ Իսամ Նակի, ՀՀ դեսպանատան անձնակազմի անդամներ եւ մեծ թիւով աշակերտներ:





## ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Կոկանեան Սրահի Տիկնանց Միութիւնը ունեցած էր շատ հաճելի գաղափարը գաղութիս յաջողակ տիկիններուն ընդմէջէն տօնախմբելու Կանանց Միջազգային Օրը, Շաբաթ, 11 Մարտ 2023-ին, Կոկանեան սրահէն ներս, եգիպտահայ հինգ տիկիններ համախմբելով զրոյցի մը շուրջ:

Մասնակիցներէն իւրաքանչիւրը խօսեցաւ իր մասնագիտական ուղիին սկզբնաւորումին մասին, ապա նշեց, թէ իրեն համար ի՞նչն էր էականը, յաջողութեան հասնելու համար:

Զրուցավար տիկին Լալա Շամամեան-ինք եւս մեր գաղութին փայլուն դէմքերէն մէկը, հակառակ անոր, որ ճարտարապետի իր մասնագիտութեամբ չէ որ կ'աշխատի-հարցումներ տուաւ եւ օգնեց, որ զրոյցը պահէ իր կայտառ գնացքը:

Այս հնգանկիւն զրոյցին կը մասնակցէին դոկտոր-փրոֆէսոր Գոհար Վարժապետեան-Վարդուկեան, դոկտոր Մարի Քիւփէլեան, ճարտարապետուհի Սաթօ Սարգիսեան-Աբգարեան, Սոնիա Միսքճեան եւ ձեւաւորող (stylist) Նարա Դելփեան:

Բոլոր հինգ տիկիններուն ալ աշխատանքային միջավայրը տեղական է, այսինքն Գահիրէի (Եգիպտոսի) ոչ հայ շրջապատին մէջ ընդհանրապէս բայց, ինչպէս նշեց դոկտոր Մարի Քիւփէլեան, հայ ըլլալու իրողութիւնը ո՛չ միայն խանգարող հանգամանք չէ, այլ ճիշդ հակառակը՝ դրական կէտ մըն է, որովհետեւ հայերը ծանօթ են քաղաքիս մէջ որպէս աշխատասէր, ազնիւ եւ գործունէայ մարդիկ:



Ներկաները հաճոյքով վայելեցին այս հնգեանկիւն զրոյցը, որմէ ետք Կոկանեան Սրահի գեղատեսիլ պարտէզին մէջ անցուցին գարնանային ջերմութեամբ լեցուն օր մը:

Բոլոր հինգ տիկիններուն ալ աշխատանքային միջավայրը տեղական է, այսինքն Գահիրէի (Եգիպտոսի) ոչ հայ շրջապատին մէջ ընդհանրապէս բայց, ինչպէս նշեց դոկտոր Մարի Քիւփէլեան, հայ ըլլալու իրողութիւնը ո՛չ միայն խանգարող հանգամանք չէ, այլ ճիշդ հակառակը՝ դրական կէտ մըն է, որովհետեւ հայերը ծանօթ են քաղաքիս մէջ որպէս աշխատասէր, ազնիւ եւ գործունէայ մարդիկ:





## ԶՈՅԳ ՀԱՏՈՐՆԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

Կազմակերպութեամբ Եգիպտոսի հայոց առաջնորդարանին, Ուրբաթ, 24 Մարտ 2023, Երեկոյեան ժամը 6:30ին, Հելիոպոլսոյ Պըլըքտանեան սրահին մէջ, Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Աշոտ Սրբ. Մնացականեանի, Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Հրաչեայ Փոլատեանի, Հայկազեան Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի եւ իր տիկնոջ, Գահիրէի թեմական եւ քաղաքական ժողովներու անդամներու, Գահիրէի զանազան հայկական միութիւններու ներկայացուցիչներու, հատորներու խմբագիր եւ Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի (ՀՍՈԿ) տնօրէն դոկտ. Անդրանիկ Տազէսեանի, հիւրերու, մտաւորականներու, մշակոյթի մարդոց, բարեկամներու եւ գիտաժողովին մասնակցած անհատներու հոյլի մը ներկայութեան տեղի ունեցաւ **Եգիպտոսի, Սուրբանի եւ Եթովպիոյ Հայերը** զոյգ հատորներուն շնորհանդէսը:



տեց այս ձեւով ամրացուող հայօճախներու ցանցակալումը եւ յարաբերութեանց զօրացումը, որով եւ կը սատարեն «մայր հողին հանդէպ ազգային գիտակցութեան ուռճացումին եւ զօրացման»: Հուսկ, ան շնորհակալութիւն յայտնեց գիտաժողովներու բոլոր մասնակիցներուն:

Իր սրտի եւ գնահատանքի խօսքը ըսաւ ՀՀ արտա-

կարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Փոլատեան, որ վկայակոչեց Գարեգին Ա. կաթողիկոսի հաստատումը, թէ «գիրքը աստուածային ծնունդ է», կարեւորեց Գահիրէի եւ Պէրիոթի մէջ կայացած զոյգ գիտաժողովներով Գահիրէի ազգային առաջնորդարանի եւ Հայկազեան Համալսարանի միջեւ յառաջացած համագործակցութիւնը եւ գնահատեց ՀՍՈԿի կազմակերպած գիտաժողովներու հատորներուն հրատարակութիւնը:

Ապա զոյգ հատորները ներկայացուց դոկտ. Անդրանիկ Տազէսեան, նշելով որ անոնք կը հաշուեն 40 ուսումնասիրութիւն եւ ունին յաւելուածի բաժիններ, ուր տեղ գտած են մամուլէն թէ արխիւներէ քաղուած վկայութիւններ, տեղեկատուութիւն, յուշագրութիւն, փաստաթուղթեր, լուսանկարներ եւ աւելցուց, որ «այս բոլորը ընթերցողին կը մատուցեն ծաւալուն գիտելիք՝ Եգիպտոսի, Սուրբանի եւ Եթովպիոյ հայօճախներուն մասին»: Դոկտ. Տազէսեան յայտնեց որ ուսումնասիրութիւններէն 16ը ստորագրուած են տեղի հայօճախներու ներկայացուցիչներէն, որոնցմէ ոմանք արտագաղթած են, թուեց նիւթերը եւ անոնց ընդգրկած ժամանակն ու օգտագործուած լեզուները:

Դոկտ. Տազէսեան ընդգծեց որ գիտաժողովներու շարքին միայն Եգիպտոս-Սուրբան-Եթովպիոյ գիտաժողովը կայացաւ ծննդավայր հայօճախի ու Հայկազեան Համալսարանին մէջ, նոյնպէս եւ գիտաժողովներու հատորներէն միայն այս զոյգ

Բարի գալուստի իր խօսքին մէջ, տորթ. Սուրէն Պայրամեան համառօտակի անդրադարձաւ գիտաժողովէն իր քաղած տպաւորութիւններուն, շեշտեց երիտասարդ մասնակիցներու դրական պարագան, որ «յոյս ներշնչեց» ներկաներուն: Ան իր «անհուն գոհունակութիւնը» յայտնեց ձեռնարկին առիթին եւ զայն նկատեց «ինքնատիպ»: Տորթ. Պայրամեան օգտաշատ նկատեց «հայրենամերձ» հայօճախները լուսարձակի տակ առնելու այս ծրագիրը, ընդգծեց «համագործակցական ոգիով ժամանակակից հայօճախներու մարտահրաւերները միասնաբար լուծելու» անհրաժեշտութիւնը եւ կարեւորութիւնը: Ան նշեց որ նման ձեռնարկները կը ծառայեն մեր պատմութեան, մշակոյթին, մօտիկ անցեալին ու իրագործածին, եւ այսօրուան մարտահրաւերներուն հանդէպ գիտակցութիւն կը մշակեն: Ան նաեւ գնահա-





հատորներն էին որոնց շնորհանդէսը կը կայանայ Գահիրէի մէջ: Ապա ան անդրադարձաւ «այս գործակցութեան խորհուրդին օրինակելիութեան», ընդգծեց որ «տանտէր հայօճախի եկեղեցական մարմինը, աջակցութեամբ տեղի միութենական ուժերուն. պատրաստակամութեամբ եւ յանձնառութեամբ մասնակցեցաւ ու սատարեց գիտաժողովին յաջողութեան»: Ան մատնանշեց որ «Հայկազեան Համալսարանը միշտ ու միայն գործակցական ոգիով մօտեցած է իր մասնակցութեամբ տեղի ունեցած միացեալ ձեռնարկներուն: Այդ ոգին նմանող դրսեւորում մըն էր ձեր ըրածը: Եւ ասիկա կը պարտինք եգիպտոսի հայօճախին ասայնչականութեան, ազնիւ ղեկավարութեան, ողջմիտ եւ մեծահոգի արժեհամակարգով, մարդկային, հայանպաստ, հարուստ ականներուն, որոնք դրսեւորուեցան հայօճախին միութենական թէ կրօնական տարրեր ներկայացուցիչներուն կողմէ»: Ան նշեց նաեւ թէ «Միջին Արեւելքի բոլոր հայօճախներուն մէջ (բացի ծոցի երկիրներէն) հայութեան թիւը նուազում կ'արձանագրէ, իսկ տեղաբնիկ ժողովուրդներուն թիւը մեծապէս կ'աճի: Ասիկա վախի, փոքրութեան, քիչութեան, տկարութեան, անհետացման եւ նման բացասական ենթագիտակցական մը կը յառաջացնէ մեր մէջ, որ անտեղի է», ու օրինակը բերաւ 1500 հոգի հաշուող Եթովպիոյ հայօճախին, որ սքանչելիօրէն կատարած էր հայապահպանումը եւ հասցուցած օրինակելի սերունդներ: Ան դիտել տուաւ թէ

«պայման չէ ունենալ տասնեակ հազարներ հաշուող հայօճախ, որպէսզի պահպանուի եւ գոյատեւէ անոր հայկականութիւնը,- ու եզրակացուց՝ արդ, փոքրաթիւ կազմակերպ հայօճախ (Եթովպիոյ հայօճախին օրինակով), բնիկ երկրին ու ժողովուրդին տրուած վերելքի, զօրացման ու բարեկարգումի անցեալի ու ներկայի նպաստի հանրայնացում եւ գիտակցում, նաեւ յանձնառու, համերաշխ եւ հասուն առաջնորդութեամբ վարուող հաստատութիւններ՝ եկեղեցի ու միութիւններ (Եգիպտոսի հայօճախ), եւ խոհեմ ու շրջահայեաց աջակցութիւն Հայաստանի Գ. Հանրապետութենէն նաեւ կայուն քաղաքական-տնտեսական-ընկերային ու ապահովական կացութիւն՝ նուազագոյն բաղադրատարրերն են որոնց հիմամբ հայօճախ մը կրնայ ունենալ գոյատեւելու առարկայական, էական ու կենսական պայմանները: Մնացեալը՝ հայօճախին անդամներուն փափաքն է»:

Ապա սրտի խօսքերով ելոյթ ունեցան գիտաժողովին ներկայ մասնակիցներ, որոնք փոխանցեցին իրենց փորձառութիւնը: Այսպէս, Ասիէ Ճիզմէճեան արտայայտուեցաւ թէ ինչպէս իր 22 տարեկան հասակին մասնակցած էր գիտաժողովին, որ իր առաջին փորձն էր եւ մեծապէս շահած այդ փորձառութենէն, ապա Այգ Զաքարեան, պատմեց թէ ինչպէս քաջալերուեցաւ ու ներկայացուց եգիպտահայ ուսանողութեան դիմանկարը եւ թէ որքան այդ ուսումնասիրութիւնը խորք ու առաւել գիտակցութիւն տուած է այդ փորձառութիւնը:





Ապա խօսք առաւ տորթ. Արմէն Մազլումեան որ կարեւորեց երիտասարդներու մասնակցութիւնը եւ իրենց տրուած առիթը, շեշտեց պատմութեան հետ հաղորդակցիլը որ «մեզ արթուն կը պահէ»: Խօսք առաւ նաեւ հալէպահայ դոկտ. Մարուշ Երամեան, որ իրեն կատարուած առաջարկով ունեցած էր տարբեր փորձառութիւն. դուրսէն (Հալէպ) ըլլալով՝ հիմա ներսէն (Գահիրէ) ստիպուած էր դիտել հայօճախը, եւ շեշտեց թէ երիտասարդութեան մասնակցութիւնը զինք «մեծ յոյսով լեցուցած էր»:

Ապա խօսք առաւ Հայկազեան Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեան, որ գոհունակութիւն յայտնեց առաջնորդ սրբազանին ցուցաբերած ոգեւորութեան, խանդավառութեան եւ ուժ ու կորով մաղթեց անոր, նաեւ՝ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանին, տորթ. Պայրամեանին եւ բոլոր մասնակիցներուն, ապա ըսաւ թէ ինք Եգիպտոսը կը սեպէ սկզբնաւորութիւն՝ բազմաթիւ առումներով. «...Տէր Յիսուսի սկզբնաւորութեան պատմութեան մէջ Եգիպտոսը կարեւոր տեղ ունի...: Եգիպտոսի սկզբնաւորութիւնը կը տեսնենք նաեւ Միջին Արեւելքի հայկական գաղութներու իբրեւ մայրաքաղաք, իսկ Հայաստանի Հանրապետութեան առնչութեամբ Եգիպտոսը նաեւ Արաբական Լիկայի կեդրոնն է»: Ան մատնանշեց նաեւ թէ վերջին երեսնամեակին կազմակերպուած գիտաժողովներէն շատերուն նիւթերը լոյս չտեսան, իսկ Հայկազեան Համալսարանի գիտաժողովները այդ առումով «իւրայատուկ են»: Ապա շարունակեց. «Այս հատորները՝ կարեւոր են: Ասոնք հիմնականին մէջ գիտաժողովներու աշխատանքն են, եւ սակայն ասոնք հանրագիտարաններ չեն տուեալ հայօճախին մասին: Ասոնք հրաւեր են որ ուսումնասիրութիւններ աւելնան, շարունակուին նոր հետազօտութիւններով»: Վեր. դոկտ. Հայտոսեան այս գիտաժողովները նկատեց նաեւ «Հայրենիքի եւ Սփիւռքի երկխօսութեան համագումարներ, յարաբերութիւններ ամրապնդելու, հետազօտութիւններ կատարելու, նոր գործակցութիւններ յառաջացնելու մղիչ ուժ, - եւ աւելցուց. - հայօճախներու պատմութեան ուսումնասիրութեան պարագային ընդհանրութիւններ

րու կ'երթանք եւ այդպէս կ'առաջնորդուինք, իսկ պատմութեան ուժը մանրամասնութեանց մէջ է»: Ան կարեւորեց «մասնաւորեցումները... մենք պարտական ենք մեր եղածին եւ ունեցածին: Եթէ մենք տէր չելլենք՝ ինչու՞ գանգատինք ուրիշին տէր չելլելէն»:

Վեր. դոկտ. Հայտոսեան անդրադարձաւ նաեւ Հայկազեան Համալսարանի հայագիտական տեղին, դերին ու առաքելութեան, ու աւարտեց իր խօսքը ընդգծելով թէ «մենք կու գանք Լիբանանէն...երկունքի ցաւով կը ծնին շատ բաներ» եւ կոչ ըրաւ քաջալերուելու՝ «այնպէս մը ապրինք որ եթէ հաշուեմ թէ ինձմէ զատ ոչ ոք մնաց, ի՞նչ պիտի նուիրեմ հայութեան պատմութեան, տեղական ժողովուրդին»: Հուսկ, ան գործակցութիւնը շարունակելու յոյս յայտնեց:

Փակման խօսքին մէջ, եգիպտահայ թեմի առաջնորդ գերշ. Աշոտ սրբ. Մնացականեան պատմեց գիտաժողովի գաղափարին, կազմակերպումին ու գործնականացումին առաջին քայլերուն իր փորձառութեան մասին, թուեց հարցադրումներ որոնք բարձրացան այդ առթիւ, ու ընդգծեց որ «ամէն բան կարելի է եթէ անոր մէջ կայ ցանկութիւն ու նպատակ»: Ան գիտաժողովները համարեց «յիշեցում՝ թէ ուր կը գտնուիս, ինչ համայնքի մէջ կ'ապրիս, այս համայնքը ինչպէս ստեղծուած է, ինչպիսի նուիրեալ անձինք իրենց գաղափարական կեանքը դրած են եւ այսօր որ մենք հոս կ'ապրինք կը վայելենք անոնց ստեղծածը: - Ապա ան շարունակեց. - ... Քրիստոս երբ աշխարհ եկաւ տեղեկութիւններ տուաւ կեանքի մասին, իմաստութեան մասին, ճիշդ ու սխալի մասին, սրբութեան ու պղծութեան մասին բայց այս ամէնը արժէք կը ստանան երբ մարդ գիտակցաբար կ'ընդունի իր կեանքին մէջ եւ կեանք կու տայ այն ամէնուն ինչ որ լաւ է ...հետեւաբար գիտաժողովը իր նիւթերով մեզի համար տեղեկութիւն է, բայց եթէ այդ տեղեկութիւնը կեանքի չի վերածուիր, քու ինքնութեանդ նորոգումին, քու պատմութեանդ վերաբերեալ նիւթեր քաղելու՝ որոնք կրնան դաստիարակիչ ըլլալ, ուղղորդող ըլլալ, եւ քու ազգային ինքնութիւնդ հաստատուն դարձնել՝ գիտաժողովը կը դառնայ պարզ տեղեկութիւն: Իսկ եթէ այս տե-

շար. էջ 29-ին



## ԴՈՒՐՍԸ ԵՒ ՆԵՐՍԸ

«Սողոմոնի Երգերը» Կոկանեանի Վ. Թէ-քէեան սրահէն ներս, Շաբաթ, 30 Ապրիլ 2023-ին:

\* \* \*

Իրարմէ կը բաժնուին ապակեայ պատով մը:

Դուրսը լուսաւոր է, խաղաղ, հաճելի, լոյսերուն տակ մարգին կանաչը կը փայլի, երջանկութիւն ներշնչելով:

Ներսը մութ է, լուռ, տագնապով եւ սպասումով լեցուն, վատ բանի մը սպասումով:

Դուրսը փոքրիկներ կը խաղան. անոնց աղմուկը յոյս կը ներշնչէ:

Ներսը մարդիկ շունչերնին բռնած կը սպասեն գալիքին: Գալիքը ծանօթ է, ապրրւած չէ, բայց գիտակցուած է. գիտէն թէ ինչ պիտի ըլլայ յետոյ. բայց եկած են, նստած են այս մութին եւ կը սպասեն:

Դուրսը խաղցող փոքրերուն մայրերը, մէկ աչքը իրենց զաւակներուն վրայ, հանդարտօրէն կը զրուցեն. անոնց ձայնը կը կորսուի խաղցող փոքրիկներու աղմուկին մէջ:

Ներսը Սողոմոնը նախ կը լսէ, ապա մտիկ կ'ընէ, ի վերջոյ կը սկսի երգել. ձայնը կը տարածուի ոչ թէ տարածութեան մէջ, այլ մութին նստողներէն իւրաքանչիւրին ներաշխարհին մէջ, տարբեր յուշեր կեանքի բերելով, որոնք կը միանան այստեղ, այս պահուն միատեղ ըլլալու իրողութեամբ:

Ներսը նստողները գիտեն թէ ինչ պիտի ըլլայ յետոյ, բայց եկեր են տեսնելու, կրկին ապրելու, վէրք մը քերելու ցաւոտ հաճոյքով:

Մայրերը նախընտրեր են մնալ դուրսը, իրենց խաղցող զաւակներուն կողքին:

Ներսը դէպքերը կը ծաւալին ճիշդ ծանօթ ուղղութեամբ. արինը կը ծորի, հրդեհին մութը կարծես արցունք կը բերէ աչքերէն: Մութին նստածները ամօթ չեն զգար իրենց արցունքները սրբելու. բոլորն ալ նոյն արցունքները ունին:

Բայց ամէն բան չէ, որ ծանօթ է ներսը նստողներուն համար, ինչպէս տարբեր փոքրիկներու ընկերութիւնը, որ կրնայ մեծնալ հասնելու համար տարբեր մարդոց բարեկամութեան, նոյնիսկ անսպասելի կողմի

զոհաբերումին:

Ներսը մութին նստողներէն մէկը անընդհատ դուրս կը նայի, խաղցող փոքրերուն, անոնց հանդարտօրէն զրուցող մայրերուն եւ կը գնահատէ մայրերուն կեցուածքը փոքրիկները ներս, մութին չբերելու. ո՞վ պիտի ուզէր իր զաւակը դնել մութին եւ անոր ցուցադրել հրդեհի եւ մահուան պատկերներ, երբ այդ փոքրերը տակաւին կեանքին համը առած չեն:

Ներսը նստողներէն մէկը կը նայի դուրս. կ'ուզէ ինք եւս դուրսը ըլլալ, կանաչ մարգագետնին վրայ, խաղցող փոքրերով եւ հանդարտօրէն զրուցող մայրերով շրջապատուած: Կը նայի ապակիէ որմէն անդին, կը ցանկայ ինք եւս հոն ըլլալ, այդ տարածքին վրայ որ վաղը պիտի գայ այդ փոքրիկներուն համար, ապագային մէջ:

Դուրսը, հայ գաղութի մը ակումբներէն մէկուն պարտէզին մէջ, Ազատն ու Վրէժը կը վազվզեն, իրենց մայրերէն ճառագայթող ապահովութեան մէջ, մարգի կանաչին վրայ, եւ վաղը իրենցն է, թէեւ տակաւին չեն գիտեր ատիկա:

Ներսը քանի մը տասնեակ մարդիկ մութին նստած կը դիտեն, կամ կրկին կը դիտեն «Սողոմոնի Երգերը»: Անոնցմէ մէկուն սիրտը դուրս կը ծորի, դէպի լոյսը, դէպի Ազատն ու Վրէժը եւ կ'աղօթէ անոնց վաղուան համար:

Ներսը նստողները գիտեն, թէ այս ֆիլմը կը սկսի իրենցմէ, ֆիզիքապէս իրենցմէ, որովհետեւ բեմադրիչին մեծ մայրը՝ Աննա Նշանեանը եգիպտահայ է, կրկնակի, եռակի գաղթական մը, նախ դէպի Եգիպտոս, ապա՝ Հայաստան եւ ի վերջոյ՝ ԱՄՆ:

Ո՞ր ծնած էր եւ ո՞ր՝ մահացած: Ժամանակին սովորական էր եւ բարեբախտութիւն չէր համարուէր նոյն տեղը ծնիլն ու այդ նոյն տեղը թաղուիլը: Այսօր:

Կարելորը սակայն դուրսը, կանաչ մարգին վրայ խաղցող Ազատն է, Վրէժը եւ անոնց ընկերները, որոնք իրենց մայրերուն ապահովութեան մէջ կը մեծնան մե՛ր վաղուան համար:

Մ. Ե.



## ՀԱՅԱԶԳԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Գեղարուեստական մարմնամարզության համաշխարհային մրցաշարքը՝ «Գահիրե 2023», տեղի ունեցավ Գահիրեի միջազգային մարզական համալիրի գլխավոր դահլիճներում մեջ, 27-30 Ապրիլ 2023-ին, մասնակցությամբ 40 երկիրներէ 155 մարզիկներու, որոնց մէջ էին Հայաստանէն 7 մարզիկներ:

Vault մրցոյթին Արթուր Դաւթեան տիրացաւ ոսկեայ մետալի եւ հանդիսացաւ 2023-ի Եւրոպայի ախոյեան:

Օղակներու մրցոյթին Արթուր Աւետիսեան տիրացաւ պրոնզեայ մետալի:

Pommel Horse մրցոյթին Գագիկ Խաչիկեան տիրացաւ արծաթեայ մետալի, իսկ Յարութին Մերտինեան՝ պրոնզեայ մետալի:

Մրցումներուն բոլոր օրերուն եգիպտահայ գաղութի անդամներէն շատեր իրենց ներկայութեամբ հոգւով-սրտով քաջալերեցին հայազգի մարզիկները:

Շնորհաւորելու համար ձեռք բերուած այս աննախընթաց արդիւնքները, Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը Կիրակի, 30 Ապրիլի երեկոյեան, ակումբին մէջ ընթրիքի հրաւիրած էր մարզիկներն ու իրենց մարզիչները:

Հիրասիրութեան հրաւիրուած էին

Նաեւ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան՝ Բարեխնամ Առաջնորդ Եգիպտահայոց Թեմին, Արժանապատիւ Տ. Յակոբ քնյ. Յակոբեանն ու երեցկինը, Տիար Հրաչեայ Փոլատեան՝ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Հայաստանի Հանրապետութեան եւ ազնուափայլ տիկինը, Գահիրեի ՀԲԸՄի Տեղական Յանձնաժողովի վարչականները, ՀԲԸՄի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տոքթ. Գէորգ Երզնկացեան եւ վարչական անդամներ: Ներկայ էին նաեւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ատենապետ Տոքթ. Հրայր Տրդատեան եւ ազնիւ տիկինն ու վարչական անդամները:

ՀԲԸՄի Շրջանակային Յանձնաժողովին կողմէ Տոքթ. Երզնկացեան քաջալերական նիւթական նուէրներ յանձնեց յաղթական մարզիկներուն ու մարզիչներուն:

Ակումբի անդամներէն շատեր մօտեցան, շնորհաւորեցին մարզիկները եւ լուսանկարուեցան անոնց հետ:

Նորանոր նուաճումներ կը մաղթենք հայազգի մարզիկներուն:

*Սօսի Ներերեան-Յակոբեան  
Ապրիլ 2023*





## ՅՈՅՍ ԿԱՅ ԱՐԴԵՕՔ

«Այս ի՞նչ օրերու հասեր եմ ...», այսպէս սկսաւ խօսիլ ան յուսահատ ծայնով, երբ առաջարկեցի օգնել իրեն պէտք եղած հագուելիքները գտնելու, Պէյրութի ՀԲԸՄի մասնաճիւղերէն Ահրամճեան սրահին մէջ հաւաքուած կոյտերուն մէջէն:

Թէպէտ խոնարհ էր տեսքով, սակայն շարժումներն ու խօսելակերպը զինք տարբեր մակարդակի վրայ դասեցին դատողութեանս մէջ: Իր դաժան առաքելութեան քիչ մը թեթեւ հանգամանք տալու միտումով ըսի՝ «բնաւ մի մտահոգուիր, յարգելի՛ տիկին, երէկ այստեղ կուտակուած հագուստ-կապուստները տիկնանց վարչութեան անդամուհիներուն հետ միասին աչքէ անցուցի եւ շատ դիրաւ կարող եմ քեզի ուղղութիւն տալ, միայն ըսէ թէ ի՞նչ կը փնտռես»:

-Քսան տարեկան աղջկանս, տարեց մօրս եւ ինծի համար եկած եմ,- շնջաց: Այնքան կ'ամչնար որ չէր կրնար գլուխը վեր բարձրացնել, հապա՛ եթէ ծանօթ մը զինք ճանչնար ...

-Եկուր հետս, աղջիկովդ սկսինք,- ըսելով ուղղեցի զինք դէպի այն սեղանները, որոնց վրայ դիզուած էին երիտասարդուհիներու յարմար ապրանքները:

Քանի մը օրէ ի վեր Պէյրութ կը գտնուէի եւ արդէն ակնյայտ էր ժողովուրդին ու երկրին թաւալգլոր անկումը: Փողոցներուն լոյսերը չէին վառեր ելեկտրականութեան չգոյութեան պատճառաւ, ամէն քայլափոխի մուրացկաններու ընտանիքներ գրաւած էին մայթերը, աղքատացած լիբանանցիներուն վրայ եկած էին աւելնալ գաղթական սուրիացիներն ու քիրտերը: Համրայի շրջանը, որ Պէյրութի ամենաբանուկ ու բարձրորակ առեւտուրի կեդրոնն էր, վերածուեր էր իր փառաւոր անցեալը ողբացող ու փակուած խանութներով թաղի մը:

Ի՞նչ կ'ակնկալուի երկրէ մը, որուն նախագահը՝ Միշէլ Օուն, Հոկտեմբեր 2022-ին իր շրջանը աւարտելէ ետք քաշուած է եւ ոչ ոք ցարդ կը լեցնէ այդ պաշտօնը. ու կարկտան կառավարութիւն մը իր խամա-

ճիկ նախարարներով, որոնք տարբեր կրօնական կուսակցութիւններու քմահաճ հրամանին ներքեւ է որ կ'աշխատին, կործանումի սեմին հասցուցած են գեղեցիկ Լիբանանը:

Զիս իսկապէս հիացուցած էր «հագուստեղէն բաժնելու պազար»ի դրութիւնը, որուն ձեռնարկած էր Պէյրութի ՀԲԸՄը:

-Հայ չքաւորներու թիւը այնքան աւելցած է, որ պէտք է օգնութեան հասնիլ անոնց,- բացատրեց լիբանանահայ ընկերուհիս,- 2016-ի տնտեսական անկումէն ի վեր սկսանք կոչ ընել լիբանանահայութեան որ, աւելորդ հագուստ-կապուստ յանձնեն ՀԲԸՄի Ահրամճեան կեդրոնին: Այսպէս տարին երկու անգամ՝ Կաղանդէն եւ Զատիկէն առաջ, Զրի Պազար կը կազմակերպենք, որմէ կրնայ օգտուիլ ո՛վ որ ուզէ, նոյնիսկ ոչ-հայեր,- բացատրեց ան:

Այս տարի, շնորհիւ վարչականուհիներուն տարած աշխոյժ աշխատանքին, աւելի քան հարիւր մեծ տուփերով փոխադրուած ապրանք կը գտնուէր սրահին սեղաններուն վրայ:

-Ի՞նչ կ'ըսես այս անուշիկ բաց կապոյտ հագուստին, Զատիկին եկեղեցիի հագուելու շատ յարմար է,- ըսի քիչ մը զուարթութիւն ներշնչելու կեանքէն յուսախաբ տիկնոջ ներաշխարհին մէջ:

-Աղուոր է... շնորհակալ եմ, տիկին,- ըսաւ ու հագուստը դրաւ ուսէն կախուած տոպրակին մէջ:

Եւ այսպէս սեղանէ-սեղան երիտասարդի, տարեցի ու տիկնոջ հագուստեղէններուն ու կօշիկներուն ընդմէջէն, մեր ուղեւորութեան որպէս արդիւնք, գոհունակ ժպիտ մը պարզուեցաւ անոր երեսին վրայ:

-Այսքանը բաւարար է, չէ՞ որ մուտքին մեզի խստիւ պատուիրած են տասը կտոր ապրանքէ աւելի չառնել, դուրսը պոչ բռնողներուն ալ առիթ տալու համար,- ըսաւ տիկինը:

-Հոգ մի ըներ, կը բարեխօսեմ քեզի համար, որ տասնըհինգ կտոր առնել թոյլատրեն քեզի,- ըսի ինքնավստահ շեշ-



տով:

Գահիրէէն եկած ու սիրայօժար կերպով մէկ օր առաջուրնէ ի վեր աշխատած անձիս հաւանաբար պիտի չմերժէին այդ խնդրանքը:

-Եկուր նստինք սուրճ մը խմենք, քիչ մը հանգիստ ընելու պէտք ունիմ,- ըսի ու առաջնորդեցի զինք դէպի սրահին կից խոհանոցը:

Արդեօք ի՞նչ էր այդ տիկնոջ կեանքին պատմութիւնը, կը մտածէի: Շուտով պարզուեցաւ:

«Երբ 1975-ի Մայիսին Լիբանանի քաղաքացիական պատերազմը սկսաւ, հազիւ եօթը տարեկան էի: Հայրս ծանօթ սրտաբան էր Պէյրութի Ամերիկեան Համալսարանի հիւանդանոցին մէջ, մայրս չէր աշխատեր ու կ'ապրէինք Րաուշէ: Շատ մը հայ ընտանիքներու նման մենք ալ գիւղը յարկաբաժին ունէինք, այն ժամանակուան յայտնի լեռներէն Տիւր-Շուէյրի մէջ, ուր ամռան տաք ու խոնաւ ամիսներուն խոյս տալով Պէյրութէն հոն կը մնայինք, մինչեւ դպրոցներու վերամուտը»:

«Այս պատերազմը անկարելի է որ երկար տեւէ, զիրար կը քաջալերէին մեր երէցները, Քաթայէպները մէյ մը որ յարձակին լեռներէն, ամէն բան պիտի վերջանայ. կ'երազէին, կը հաւատային ու կը ջանային իրենց բնականոն կեանքը շարունակել: Ռուսներու պայթիւններուն տակ հարսնիքներ տեղի կ'ունենային, ակումբներուն մէջ ձեռնարկներ ու պարահանդէսներ կը կազմակերպուէին, երեխաներ կը ծնէին, դպրոցներ վերամուտներ կ'ունենային: 1990-ին ես ալ կրակներուն տակ ամուսնացայ ու գացի բնակելու Պէյրութի կեդրոնէն քիչ մը դէպի հիւսիս, նորաստեղծ Զալքա թաղը»:

«Հակառակ պատերազմին, լաւ էր ամուսինիս գործը, անիկա խոհանոցի ելեկտրական սարքաւորումներու յայտնի հաստատութեան մը միակ ներկայացուցիչն էր Լիբանանի մէջ: Երկրէն գաղթողներու թիւը մեծ էր այդ տարիներուն, սակայն մենք չլքեցինք մեր ծննդավայրը: 1995-ի զինադադարէն ետք բնականոն կեանքի նշոյլներ սկսան պարզուիլ Լիբանանի մռայլ հորիզոնին վրայ: Պէյրութի

կեդրոնն ու շրջակայքը գրեթէ բոլորովին քանդուած էին ու վարչապետ Րաֆիք-Ալ-Հարիրին անցաւ վերաշինութեան մեծածաւալ աշխատանքի: Սակայն Լիբանանի վերականգնումը խոտոր կը հանդիսանար շուրջի երկիրներուն ծրագիրներուն հետ: 14 Փետրուար 2005-ին Հարիրին նենգաբար սպաննուեցաւ ու երկիրը կրկին տատանիլ սկսաւ դէպի անորոշութիւն»:

«Կրօնական հոսանքը զօրացած էր ու աչք ունէր շահաբեր հաստատութիւններու տիրանալու, որոնց մէջ էր ամուսնիս գործը: Տեսակ-տեսակ արգելքներ ու դժուարութիւններ դնելով անոր դիմաց այլեւս անկարող եղաւ տոկալու, հաստատութիւնը ծախեց չնչին գինով ու քանի մը տարի անգործ մնաց: Մինչ այդ աղջիկս ծնած էր, հայրս մահացած ու մայրս, լքելով Րաուշէյի շքեղ յարկաբաժինը, որ ծանր վնաս կրած էր պատերազմին, եկած էր մեզի հետ ապրելու: Խնայողութեամբ ապրելով քանի մը տարի տոկացինք, մինչեւ որ ամուսինս, ընկերոջ մը հետ, պզտիկ ճաշարան մը բացաւ Մար Մըխայիլի մէջ: Գօտիները պէտք էր աւելի եւս սեղմել, նոր գործը կարօտ էր ամէն մէկ լիրային»:

«Մանկութեան, պատանեկութեան ու երիտասարդութեան տարիներու ապրած հանգիստ ու անփոյթ կեանքս կրկնելու յոյսի մը նման կ'անհետանար...: 2019-ին հազիւ թէ գործերը սկսեցին էին լաւ ճամբու մէջ մտնել, երբ 2020-ին Գորոնա ժահիրին պատճառաւ պարտադրուած արգելափակումները ջլատեցին մեր լաւատեսութիւնը»:

«Կարծէք այսքան դժբախտութիւն բաւարար չէր մեր ընտանիքին համար, վրայ հասաւ 4 Օգոստոս 2020-ի ահաւոր փորձանքը, Պէյրութի նաւահանգիստին պայթումը ... Շէնքին ներքնամասը, ուր կը գտնուէր խոհանոցը, կանգնած աչքէ կ'անցնէի բերուած բանջարեղէնը ընթրիքի պատրաստութեան համար: Ամուսինս ու իր գործակիցը, որոնք այդ պահուն ճաշարանին բաժնին մէջ կը գտնուէին, մնացին փշրուած ապակիներուն ու փլատակներուն տակ եւ չազատեցան... Բա-



րեֆախտաբար մայրս ու աղջիկս տունը ըլլալնուն, անվնաս դուրս եկած էին այս փորձանքէն»:

-Իսկ հիմա ինչպէ՞ս կը ճարէք ձեր ապրուստը,- հարցուցի կնոջ, որուն կեանքին պատմութիւնը կը պատկերացնէր Լիբանանի ժողովուրդին տարիներու պատմութիւնը:

-Արդիական գիտելիքներու անտեղեակ ու աշխատանքի փորձառութիւնէ զուրկ, միայն Super Marketի մը մէջ գործ գտայ,- բացատրեց ան ու աւելցուց,- անշուշտ ամսականս մեծ բան մը չէ, սակայն

ժամկետը անցնելու մօտ ուսեստեղէնը կը բաժնեն պաշտօնեաներուն, ուստի անօթի չենք մնար,- ըսաւ: Հաւանաբար արտայայտութեանս մէջ տեսաւ իր կեանքի դժբախտութիւնը:

-Եկուր նորէն շրջան մը ընենք ու աչք մը նետենք ապրանքներուն վրայ, այս օրերն ալ կ'անցնին,- ըսի ու մտովի մաղթեցի, որ եկող օրերը այս օրերը փնտռել չտան:

**Սօսի Ներերպեան-Յակոբեան  
Ապրիլ 2023**

շար. էջ 25-էն

## ԶՈՅԳ ՀԱՏՈՐՆԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

ղեկութիւնները սերմնացանի առածին պէս ծիլ չտան մէջդ եւ չօգնեն որ քու այսօրուան կեանքդ ապրիս, քու հայկականութիւնդ, մշակոյթդ, ինքնութիւնդ պահելու ջանաս՝ դարձեալ կը մնայ անօգուտ քու կեանքիդ համար, թէեւ ինքնին ան արժէքաւոր է: Օգտուողները որոնք չեն օգտուիր՝ իրենք են տուժողը: Կարելոր է որ մենք գիտնանք ուր ենք, իբրեւ մասնակից, ուր ենք իբրեւ ընդունող եւ ուր ենք այդ բոլորը կատարող-գործադրող՝ այն միջավայրին մէջ ուր կ'ապրինք»: Սրբազանը եզրափակեց՝ «... ոչ թէ լաւ չէ քու մօտիկ անցեալիդ մասին չգիտնալ, այլ լաւ չէ որ գիտնալէդ ետք չես ուզեր աւելի խորանալ, շարունակել եւ աւելին ստանալ որովհետեւ վերջ ի վերջոյ այս ամէնը հարստութիւն է եւ հարստութիւնը գոյութիւն ունի եթէ կայ փոխանցում, սերնդափոխութիւն, յաջորդական գործադրութեան հնարաւորու-

թիւն»: Հուսկ, ան մաղթեց որ յառաջիկային նման կամ տարբեր ձեռնարկներու համագործակցութիւն ըլլայ, շնորհակալութիւն յայտնեց ատենի եւ ներկայի եգիպտահայ ազգային իշխանութեան անդամներուն, որոնք հաւատացին, վստահեցան եւ համոզուեցան արդիւնքով թէ կարելի է գործ մը սկսիլ ու հասնիլ աւարտին՝ եթէ իրապէս ցանկութիւնը կայ ատոր: Ան շնորհակալութիւն յայտնեց Հայկազեան Համալսարանի պատկան մարմիններուն, որոնք «Գահիրէի մէջ ուզեցին կատարել շնորհանդէսը ու վերադարձնել գիրքն ու պատմութիւնը իր տիրոջ»:

Շնորհանդէսի աւարտին, հիւրասիրութեան ընթացքին, ներկաները ծաւալեցին հաճելի խօսակցութիւններ, քննարկումներ, վերլիջեցին գիտաժողովին փորձառութիւնը եւ լիցքաւորուած մեկնեցան սրահէն:



## ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼ ՍՓԻՒՌԱՀԱՅԸ

26 Մարտ 2023-ին իր մահկանացուն կնքած է ԹՄՄ Ամերիկայի եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան ատենապետ, ՌԱԿի ղեկավար, ՌԱԿի Համադրուած Մամուլի հիմնասիւներէն, համբաւաւոր մտաւորական, հրապարակախօս եւ հրապարակագիր Երուանդ Ազատեան, Ֆլորիտայի մէջ (ԱՄՆ), կարճատեւ հիւանդութենէ մը ետք:



Կոտալազեան, 1935 Պէյրութ, Լիբանան – 2023, Ֆլորիտա, ԱՄՆ)

Շրջանաւարտ է Պէյրութի ՀԲԸՄ Յովակիմեան Մանուկեան Վարժարանէն: Աւարտած է Պէյրութի Ամերիկեան համալսարանը, 1958-ին, Պոսթընի «Նորթ Իսթըրն» եւ Տիբորյիթի «Ուէյն Սթէյթ» համալսարանները, 1973 թուականին:

Երուանդ Ազատեան նուիրեալ մըն էր Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան, որուն աւանդը մեծ է կազմակերպութեան արդի պատմութեան մէջ: Ան կը համարուի ՌԱԿ-ի մեր ժամանակներու կարեւորագոյն տեսաբաններէն մին:

Երուանդ Ազատեան մեծ ներդրում ունեցած է սփիւռքահայ մամուլի զարգացման կանոնաւոր ընթացքի մէջ՝ 1954-1958 թուականներուն ան եղած է Պէյրութի «Զարթօնք-սփոր» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիրը, իսկ 1959-1967 թուականներուն՝ Գահիրէի «Արեւ» օրաթերթի խմբագրապետը:

Ազգային-եկեղեցական, կուսակցական եւ միութենական շրջանակներուն մէջ ազդու եւ կարեւոր գործունէութիւն տարած է Ազատեան: Ան տարբեր ձեւերով սատարած է Հայրենիքի եւ Սփիւռքի ազգային-քաղաքական եւ մշակութային բնագաւառներուն, այցելութիւններով եւ հաղորդակցութեամբ կապի մէջ ըլլալով հայրենի եւ սփիւռքահայ քաղաքական գործիչներու եւ մտաւորականութեան հետ:

Խմբագրական գործունէութիւնը 1960-ականներու վերջերէն սկսեալ շարունակած է ԱՄՆ-ի մէջ, 1967-1972 թուականներուն, ըլլալով Պոսթընի «Պայքար» հաստատութեան վարիչ-տնօրէնը, «Պայքար» գրական եռամսեայ հանդէսի եւ «Տը Արմենիըն Միրըր Սփէքթէյթըր» թերթի խմբագրակազմերու անդամ:

Երուանդ Ազատեան հեղինակած է տասնեակ հատորներ եւ երկար տարիներ է Վեր կը ստորագրէր Միացեալ Նահանգներ հրատարակուող «Պայքար» եւ The Armenian Mirror Spectator թերթերու խմբագրականները ու նաեւ կը վարէր «Պայքար»-ի գլխաւոր խմբագրի պաշտօնը:

Երուանդ Ազատեան 1971 թուականէն ի վեր Մոնրէալի «Ապագայ» շաբաթաթերթի, 1986 թուականէն ի վեր՝ Նիւ Եորքի «Արարատ» (անգլերէն) հանդէսի, 1991 թուականէն ի վեր՝ Հայաստանի «Ազգ» օրաթերթի, 2006 թուականէն ի վեր՝ Պէյրութի «Կամար» գրական հանդէսի հիմնադիրներէն եւ գլխաւոր աշխատակիցներէն է: Անոր յօդուածները ընդհանրապէս լոյս տեսած են ՌԱԿ-ի աշխարհասփիւռ մամուլին մէջ:

Հայկական դատի անվեհեր մարտիկ Ազատեան իր կուռ գրիչով, խորքային կերպով վերլուծած է ազգային եւ աշխարհաքաղաքական իրավիճակը:

Ազատեան երկարամեայ գործունէութիւն ծաւալած է նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) մշակութային կառոյցներէն ներս, եղած է ազգային մեծ բարերար Ալեք





Մանուկեանի անձնական գրասենեակի վարիչը, իսկ 1972-1997 թուականներին՝ ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկեան» մշակութային հիմնադրամի ատենապետը, Տիթորոյի «Հայ մշակոյթի ժառանգութիւն» (անգլերէն) ծայնասփիւռային ծրագրի տնօրէնը, նաեւ Տիթորոյի ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկեան» վարժարանի հոգաբարձութեան ատենապետը:

Ան հեղինակ է «Կեանք ու երազ Հայաստան» (1964 ուղեգրութիւն), «Գրական-գեղարուեստական սելեռումներ» (1988), «Դիմանկարներ եւ դիմաստուներ» (անգլերէն, 1995) գրականագիտական ուսումնասիրութիւններու, «Պատմութիւնը ընթացքի մէջ» (քննասիրութիւն, անգլերէն, 1999), «Դիտումներ եւ դատումներ» (2006, հրապարակագրութիւն), Վահան Թէքէեանի «Հատընտիր» եւ «Perspectives Armeniennes» իր յօդուածներու ֆրանսերէն թարգմանութիւնը, ինչպէս նաեւ խմբագրած է Վահան Թէքէեանի փունջ մը քերթուածներուն երկլեզու՝ հայերէն եւ անգլերէն հրատարակութիւնը եւ այլ գիրքեր:

ԱՄՆ-ի եւ Հայաստանի մէջ վերջերս տեղի ունեցան Երուանդ Ազատեանի «Ազգային-Քաղաքական Յորձանուտին Մէջ» երկհատոր գիրքերուն շնորհահանդէսները:

Անդամ է Հայաստանի Գրողներու Միութեան, ինչպէս նաեւ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիային:

Արժանացած է զանազան պարգևատրումներու, որոնց շարքին. «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» հայրապետական շքանշան, ձեռամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, 1989-ին, Հայաստանի Ազգային Գրադարանի Յակոբ Մեղապարտ շքանշան, 1991-ին, «Հայրենիքին մատուցած ծառայութիւններուն համար» 2-րդ աստիճանի մեդալ, 2009-ին, «Մովսէս Խորենացի» ՀՀ նախագահական եւ Հայաստանի Գրողներու Միութեան մետալներուն:

Արժանացած է Երեւանի Պետական համալսարանի Պատուոյ դոկտորի կոչումին:

**«Զարթօնք»էն քաղուած**

## ՉԷՆՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՉԷՆՆԱՅԻ (Հնդկաստան) Ս. Աստուածածին հայկական եկեղեցին, որ կառուցուած է 1772 թուականին, յիշեցում մըն է այս քաղաքին մէջ գոյութիւն ունեցած հայկական գաղութին մասին: Թէեւ ժամանակուան բարգաւաճ գաղութէն այսօր գրեթէ ոչինչ մնացած է, եկեղեցին կը շարունակէ փոքր հայաստան մը ըլլալ քաղաքին մէջ ապրող հինգ հայերուն համար:

Եկեղեցւոյ մէջ կատարուած վերջին պատարագէն երեք տարի ետք, Կիրակի 5 Փետրուարին այդ հինգ հայերը քով քովի եկան յիշատակը յարգելու համար հայ մամուլի հիմնադիր Յարութիւն Քահանայ Շնաւոնեանի, որ 1794 թուականին Մատ-

րասի (Հնդկաստան) մէջ կը հրատարակէր հայերէն առաջին օրաթերթը՝ «Ազդարար»ը:





## ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ ՌԻՔՐԱՆԱՑԻ

**Ամերիկաքնակ մրաւորական դոկտ. Վարդան Մալթեոսեանի յօդուածը լոյս տեսած է արուեստի նուիրուած Hyperallergic (<https://hyperallergic.com/802391/met-museum-shouldnt-have-reclassified-ivan-aivazovsky-as-ukrainian/>) թերթին մէջ, 21 Փետրուար 2023-ին, ուր կը քննադատէ Նիւ Եորքի նշանաւոր թանգարանը՝ The Met-ը: Արդեօք այս բողոքը տեղ պիտի հասնի եւ արդիւնք ունենայ: Կը ներկայացնենք գրութիւնը ամբողջութեամբ:**

19րդ դարու երեք արուեստագէտներ՝ Արխիպ Կուինճի, Իլիա Բեպի եւ Իվան Այվազովսկի, որոնք նախապէս նշուած էին որպէս ռուս, այսօր «ուքրանացի»ներ են Նիւ Եորքի հռչակաւոր Մետրոպոլիթէն թանգարանի կայքին մէջ տեղ գտած իրենց ստեղծագործութիւններուն տակ: Գոնէ Այվազովսկիի պարագային այս «վերապիտակաւորում»ը մեծ սխալ է:

Թերեւս կարելի է հասկնալ «Ուքրանական արուեստի ապագադութացումը ԱՄՆի մեծագոյն թանգարանին կողմէ», ինչպէս կը գրէ Kyiv Post, բայց չենք կրնար հասկնալ նախորդ պիտակին մէջ դրսեւորուած տգիտութեան փոխարինումը նոր տգիտութեամբ մը:

Անցեալին, նման բաներ սովորական էին. առաջին անգամ չէ, որ ամբողջութեամբ հայ գեղանկարիչ Այվազովսկին (1817-1900), կը նշուի որպէս ռուս, պարզապէս անոր համար, որ ծնած է ռուսական կայսրութեան մէջ, ուր Այվազեան մականունը ռուսականացուած է եւ դարձած Այվազովսկի, բան մը որ շատ սովորական էր ռուսական կայսրութեան մէջ:

Արդեօք Այվազովսկիի Սեւ ծովի ափին, Ղրիմի Թէոդոսիա քաղաքը ծնած ըլլալն ու ամբողջ կեանքը հոն ապրած ըլլալը զինք ուքրանացի կը դարձնէ: Փաստ է, որ Այվազովսկի մկրտուած է որպէս Յովհաննէս Այվազեան, Թէոդոսիա քաղաքի Սուրբ Սարգիս Հայ Առաքելական եկեղեցւոյ մէջ եւ նոյն եկեղեցիին մէջ ալ թաղուած է 83 տարի անց. այս փաստը պէ՛տք է հաստատէ անոր ինքնութիւնը: Այվազովսկի երբե՛ք պատկանած չէ ուքրանական եկեղեցւոյ եւ երբե՛ք չէ տիրապետած ուքրաներէնին: Անոր ծննդավայրը Ղրիմի խանութեան մաս կազմած է 1443-1783 ժամանակաշրջանին, Օսման-

եան կայսրութեան վասալը, որ յետոյ ինկած է ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ մինչեւ 1917 թուականը, նկարիչին մահէն գրեթէ երկու տասնամեակ ետք, իսկ մինչեւ 1954 թուականը մաս կազմած է Ռուսաստանի:

Գիտենք թէ ժամանակի եւ տարածութեան սահմանները հատող ինքնութիւնները կրնան բարդութիւններ յառաջացնել, բայց կ'ուզենք իմանալ, թէ ինչո՞ւ The Met-ը կրկնակի չափանիշեր կ'օգտագործէ: Արդեօք կա՞յ բանաւոր պատճառ մը, որ Այվազովսկին կամ Կուինճին (պոնտական-յունական ծագումով) որպէս ուքրանացիներ ներկայացուին, մինչ Փօլ Բլին կը նշուի որպէս «Զուիցերիա ծնած գերմանացի», իսկ Արշիլ Կորքին՝ «Հայաստան ծնած ամերիկացի»: Կարելի չէ՞ Այվազովսկին նշել որպէս հայ եւ այդպէս աւելի ճշգրիտ պատկերը տալ անոր ինքնութեան:

Պէ՛տք է անհամբեր սպասենք, որ The Met-ը Կոստանդնուպոլիս ծնած քանի մը հայ, յոյն կամ հրեայ արուեստագէտներ նշէ որպէս թուրքեր ... Ամէն ինչ հնարաւոր է այս օրերուն, երբ պետութեան, ազգի եւ կրօնի սահմանները դիտումնաւոր կերպով կը շփոթուին, քաղաքական թէ գաղափարական պատճառաբանութիւններով:

Ռուսական կայսերապաշտութիւնը Ուքրանիոյ, անոր մշակոյթին եւ ընդհանրապէս նախկին խորհրդային ժողովուրդներու նկատմամբ արժանի չէ գովասանքի, շատ հիմնաւոր պատճառներով, բայց ապագադութացման ջանքերը նոյնպէս գովելի արարքներ չեն:

**Վարդան Մալթեոսեան  
Նիւ Եորք**



## ԳԱՆԱՏԱԿԱՆ ՕՓԵՐԱՅԻ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ

Գանատական մանկական օփերային ընկերությունը (CCOC) հպարտութեամբ կը յայտարարէ ամենամեայ գլխավոր բեմական բեմադրութեան վերադարձը՝ իր նորագոյն եւ 14-րդ օփերային յանձնարարութեամբ՝ «Հազար երգի գիշերը», Ճուշի մրցանակակիր երաժիշտ Սերուժ Գրաճեանի եւ Տորայի մրցանակակիր լիպրէթիստ Մարճըրի Չանի կողմէ:

«Հազար երգի գիշերը», որ վերջին նոր օփերան է CCOC-ի կողմէ պատուիրուած ստեղծագործութիւններու երկար պատմութեան մէջ, առաջին անգամ ներկայացուած էի Մարտ 2023-ին, Meridian Arts Centre, Հիւսիսային Եորքի մէջ:

Օփերան հիմնուած է հայկական հէքեաթի մը՝ «Հազարան Պլպուլ»ի վրայ. Պատմութեան ընթացքին կը հետեւինք քոյր ու եղբայր Լիայի եւ Արիի ճամբորդութեան ընդմէջէն, երբ անոնք կը հեռանան իրենց հայրենիքին մէջ տեղի ունեցող ողբերգութիւններէն եւ կը սկսին արկածախնդրութեան մը՝ գտնել հազարան պլպուլը, որ կեանք եւ ուրախութիւն կրնայ վերադարձնել իրենց երկրին: Ճամբուն վրայ անոնք կը յիշեն իրենց կորսնցուցած ընկերներն ու ընտանիքը, եւ բազմաթիւ մարտահրաւերներու եւ խոչընդոտներու կը բախին: Պատմութիւնը յոյսի մասին է, թէ ինչպէ՞ս կարելի է առաջ նայիլ, ճեղքելով սարսափելի դէպքերու պատը, միաժամանակ յարգել բոլոր անոնք, որոնք ա՛լ մեզի հետ չեն, եւ յոյսով սպասել գալիքին:

Օփերան պիտի ներկայացնեն 7-18 տարեկան 70 երիտասարդներ՝ անգլերէն, հայերէն եւ արաբերէն լեզուներով: CCOC-ն ուրախ է ողջունելու իր շրջանաւարտ գանատահայ սփրանս Լին Իսնարին, որ պիտի առնէ պլպուլին դերը: CCOC-ի երաժշտական ղեկավար Թերի Տաննը պիտի ղեկավարէ արհեստավարժ սենեկային նուագախումբը, ներառեալ հայկական տուտուկը՝ հին հայկական երկեղէգ փողային գործիքը, որ իր արտայայտչութեամբ եւ խորունկ զգացումներ հաղորդելու կարողութեամբ կը համեմատուի մարդկային ձայնին հետ, յուզե-

լով հանդիսատեսը եւ խորասուզելով զայն երաժշտական անմոռանալի փորձառութեան մը մէջ, որ կ'արտացոլէ ինչպէս հայկական, այնպէս ալ արեւմտեան հնչեղութիւնն ու երաժշտական աւանդոյթները:

Գանատացի դաշնակահար եւ երաժիշտ Սերուժ Գրաճեան, այս գործը ներշնչուեր է Կովկասն ու Մերձավոր Արեւելքը միացնող հարուստ մշակոյթէն եւ երաժշտութենէն: Երբ գլխավոր հերոսները կը ճամբորդեն Արարատեան հարթավայրէն դէպի Լիբանան, երաժշտութիւնը կը փոխուի եւ կը դառնայ յստակօրէն արաբական, կատարուած արեւելեան գործիքներով:

Իսկ լիպրէթիստ Մարճըրի Չան, որ շատ խանդավառ է այս օփերայով, կ'ըսէ.

«Սերուժը ինձի նուիրեց այս սքանչելի հէքեաթը, որ յոյսով լեցուն է, լեցուն երեւակայութեամբ, հմայքով եւ շատ մարդկային է: Ապշած եմ փոքրիկ հերոսներուն հոգիի ճկունութեամբ: Երբեք մտածած չեմ ցեղասպանութենէ եւ պատերազմներէ փրկուած երեխաներու մասին, թէ ինչպէ՞ս կ'ապրին եւ ինչպէ՞ս ճամբայ կը գտնեն դէպի յոյս եւ լոյս»:

Ստեղծագործական եւ մշակութային տնօրէն Էյմի Գազանճեան կը կարծէ, թէ «Հազար երգի գիշերը» հայոց փորձառութեան մասին է, սակայն այս օփերան կ'արտացոլէ նաեւ այլ ազգերու կրած տառապանքները, պատերազմներու ընթացքին: «Անիկա կը խօսի նաեւ մեզի, գանատացիներուս, որոնք եկած եւ ապրած են **ինսուիդ**ներու եւ **մեպիս**ներու հողերուն վրայ: Մենք կարելոր դեր ունինք կատարելիք այս հողերուն եւ անոնց վրայ ապրող բնիկներուն պատմութիւնը ճանչնալու մէջ: Այս օփերայով յոյս ունինք նպաստել մշակութային փոխանակման եւ պատմութեան բարդութիւններու ըմբռնումին» կ'ըսէ Գազանճեան:

Օփերային տեւողութիւնն է 65 վայրկեան եւ կը կատարուի առանց ընդմիջումի: Յարմար է 7-77 տարեկան բոլոր մանուկներուն համար:



## ՍԷՆՏՆՈՒՇԻՆ ՋԱՐԴԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Սենտնցի բանասիրուհի Թաուասիֆ Համիտ էլ Մուգալէլ էլ Անզի պաշտպանած է մագիստրոսական թէզ մը, «Մեծն Բրիտանիոյ քաղաքականութիւնը 1915-ին, Հայերուն Կոտորածներուն առնչութեամբ» խորագրով, Մարտ 2023-ին:

Իր պաշտպանութեան ընթացքին բանասիրուհին փաստացի տուեալներով հաստատած է Հայկական Ջարդերուն իրաւացիութիւնն ու թուած է այն պատճառները, որոնց համար կարգ մը երկիրներ կը ժխտեն պատմական այս իրողութիւնը:

Արմէնփրեսի հետ իր գրոյցին ընթացքին Թաուասիֆ պընթ Համիտ պարզած է այն պատճառները, որոնց համար ընտրած է այս նիւթը որպէս թէզ իր մագիստրոսական աշխատանքին:

«Նպատակս է խօսիլ պատմութեան բոլոր վիճահարոյց հարցերուն մասին, ինչպէս ջարդերն ու կոտորածները, որոնց հազիւ թէ այլ բանասէրներ մօտենան, բացի այդ կոտորածներուն եւ ջարդերուն ենթարկուած մարդոց շահաւիղներէն: Երկրորդ՝ հազուադէպ են Անգլիոյ այդ շրջանին հայերու ջարդերուն դէմ ունեցած կեցուածքին մասին ուսումնասիրութիւնները, երրորդ՝ իմ պարտականութիւնս էր բացայայտել պատճառները Անգլիոյ կեցուածքին: Այդ շրջանին Բրիտանական կայսրութիւնը ամենէն կարելոր քաղաքական ոյժն էր եւ որ մեծ դեր խաղցաւ, ի տարբերութիւն այլ երկիրներու, եւ ի վերջոյ՝ փաստերու եւ տուեալներու առատութիւնը այդ նիւթին մասին, ինչպէս զինուորական կցորդներու եւ սպաներու նամակագրութիւնները, որոշ չափով դիւրացուց աշխատանքս»:



Թաուասիֆ պընթ Համիտ 2019-2021-ի ընթացքին բազմաթիւ երկիրներ ճամբորդած է, մասնաւորաբար ուր որ հայկական գաղութներ կան, որոնք շահաւիղներն են 1915-ի ջարդերու զոհուածներուն, այցելեցի Լիբանան, Հայկազեան Համալսարան, ուր դոկտ. Անդրանիկ Տագէսեան օգտակար եղաւ ինձի, ապա՝ Եգիպտոս Գահիրէ, ուր հանդիպեցայ Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ տոքթ. Արմէն Մազլումեանին: Այցելեցի տարբեր դաւանանքներու հայ կրօնական պետերուն Լիբանանի եւ Եգիպտոսի մէջ, որովհետեւ կ'ուզէի իմանալ անոնց կեցուածքը հանդէպ հայկական ցեղասպանութեան»:

Թաուասիֆ պընթ Համիտ առաջին սենտնցին է, որ անդամ կը դառնայ Պատմաբաններու Միջազգային Դաշնութեան, եւ առաջինն է որ ուսումնասիրութիւններ կը կատարէ Սենտնցիայի մէջ քաղաքական եւ զինուորական հարցերու շուրջ:

Տիրացած է բազմաթիւ մրցանակներու եւ պատուոյ գիրերու:



## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Երկրի մը համար, որ յամառօրէն կը մերժէ ճանչնալ հայոց ցեղասպանութիւնը եւ կը շարունակէ սատարել ցեղասպանական գործողութիւններուն Արցախի դէմ, նման քայլ քիչ մը զարմանալի կը թուի: Բայց քայլը առնուած է ...

Հայֆա քաղաքին (Իսրայէլ) հրապարակներէն մէկը վերանուանուած է «Հայոց ցեղասպանութեան հրապարակ (Armenian Genocide square):

Հակառակ Թէլ Ավիվի Թուրքիոյ դեսպանատան բանեցուցած ճնշումներուն, բացման արարողութիւնը տեղի ունեցած է 20 Մարտ 2023-ին, ներկայութեամբ Հայֆայի քաղաքապետ տիկին Էյնաթ Քալիշ-Ռոբէմի եւ Իսրայէլի ՀՀ դեսպան դոկտ. Արման Յակոբեանի:



### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Արեւմտահայ Բանաստեղծութեան Փառատօն «Փառատօնի հիմնական նպատակն է արեւմտահայերէնով ստեղծագործող մերօրեայ բանաստեղծները եւ անոնց ստեղծագործութիւնները ծանօթացնել, ընդհանրապէս հայ, եւ յատկապէս՝ հայրենի ընթերցողներուն»:

«Միացէ՛ք մեզի, գրական արեւմտահայերէնը եւ դասական ուղղագրութիւնը տարածելու այս նախաձեռնութեան եւ Ձեր լուծման բերէք հայրենիքի մէջ արեւմտահայերէնը հասանելի եւ ապրող լեզու դարձնելու աշխատանքին»:

Այս կոչով դիմած էր Շիրակի Մարզային Գրադարանի արեւմտահայերէնի պատասխանատուն սփիւռքահայ, ընդհանրապէս արեւմտահայերէնով ստեղծագործող բանաստեղծներուն, «Բանաստեղծութեան Օր»ուան առիթով կազմակերպուած այս փառատօնին:



### ՀԱՄԵՐԳ ՎԷՐՍԱՅԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ

22 Մարտ 2023-ին Փարիզի Վերսայ պալատին արքայական մատուռին մէջ տեղի ունեցած է «Հայկական ոգին» խորագիրով հայ հոգեւոր երաժշտութեան համերգ, հայ եւ ֆրանսացի երաժիշտներու կատարումով, նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 108-րդ տարելիցին:

Այս համերգը կազմակերպուած է Վերսայի պա-





լատի օփերային եւ Ֆրանսայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան համագործակցութեամբ, որուն համար հիմք ծառայած է նախորդ տարուան Ապրիլին Վերսայի մէջ առաջին անգամ հայ երաժշտարուեստի գոհարները ներկայացուցած եւ մեծ յաջողութեան հասած բացառիկ համերգը:

«Հայկական ոգին» խորագիրը կրող համերգին ընթացքին ելոյթ կ'ունենան Վերսայի պալատի արքայական օփերայի նուագախումբը, Ստեֆան Բլենիագի ղեկավարութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Սուրբ Խաչ» երգչախումբը Շահէ Քէշիշեանի խմբավարութեամբ, ինչպէս նաեւ տաղանդաշատ հայ քանոնահար Նարեկ Կազազեանը, միջազգային հռչակ վայելող ֆրանսահայ թաւջութակահար Աստղիկ Սիրանոսեանը, Հայաստանի ազգային նուագարաններու պետական նուագախումբի մենակատար՝ տուտուկահար, շուիահար Հելպերդ Ասատրեանը:

Համերգին ընթացքին կը հնչեն հայ հոգեւոր երաժշտութեան գոհարները, ինչպէս՝ Մաշտոցեան շարականները եւ հայկական ժամերգութեան Կոմիտասի մշակումները:

### **ԵՐԿՐՈՐԴ ՄԻՇՐԸՆԸ**

Պրուսէլի (Պելճիգա) Պոզար ճաշարանի խոհարար Կարէն Թորոսեան Մարտ 2023-ին նուաճած է Միշըլէնի իր երկրորդ աստղը:

Այս մրցանակը կը նկատուի աշխարհի բարձրագոյնը, զոր կրնայ ճաշարան մը ստանալ, ըստ իր մակարդակին: Ունի երեք աստղեր, որոնց երրորդը աշխարհի մէջ քանի մը տասնեակ ընտրեալներ միայն նուաճած են:

Կարէն Թորոսեան հռչակ շահած է դասական ճաշատեսակներ իր անձնական հպումներով ներկայացնելուն համար:

### **ԵՐԱԺԻՇՏ ՄԻՍԱՔ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ**

Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի պատմական Պոլշոյ թատերասրահին մէջ տեղի ունեցաւ «Պրաւօ» միջազգային դասական երաժշտութեան մրցանակի բաշխման արարողութիւնը, մասնակցութեամբ ռուս եւ օտար երաժիշտներու:



Երեկոյթին պարգեւատրուեցաւ սուրիահայ երաժիշտ, Սուրիոյ սիմֆոնիք ազգային նուագախումբի խմբավար մայեսթրօ Միսաք Պաղպուտարեանը, որպէս մասնակից երկիրներու դասական երաժշտութեան լաւագոյն կատարող:

Այս առիթով Պաղպուտարեան ըսաւ, որ մրցանակը կը բաժնեկցի իր սուրիացի բոլոր գործընկերներուն հետ, որոնք հակառակ պատերազմի տարիներուն, շարունակեցին իրենց երաժշտական գործունէութիւնը:

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ Գահիրեի Երուանդ Գ. Աղաթոն գրադարանը իր շնորհակալությունը կը յայտնէ

### Սարգիս եւ Ծովիկ Եանրգեաններուն

որոնք իրենց ընտանեկան գրադարանին հայերէն գիրքերը, The War in Pictures շարքին 16 հատորները եւ այլ գիրքեր նուիրեցին, թիով 176 կտոր, որոնցմէ 55-ը հրատարակուած 1800-1870-ի շրջանին:

### Վաչէ Ղազարեանին (ԱՄՆ)

որ Եգիպտոս այցելութեան առիթով գրադարանիս նուիրեց իր հեղինակութեամբ թէ խմբագրութեամբ թիով ինը (9) գիրքեր:

### Աննա Գազանճեան-Թորոսեանին

որ իր ընտանեկան գրադարանէն նուիրեց մամուլի բազմաթիւ օրինակներ, ինչպէս եւ գիրքեր:

### Սոնիա Սարգիս-Յակոբեանին

իր նուիրաբերած բաւական մեծ (86x68 cm.), շրջանակուած, հին եւ թանկարժէք ձեռագործ-նկարին համար, որ իրագործուած է մետաքսի վրայ, լեցուածք ասեղով:

Նկարը կը ներկայացնէ Քրիստոսի մկրտութիւնն ու Սուրբ Հոգիին աղանակերպ երեւումը:



